

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9. Ohnega
Eunice 4/26
1931

891.99
D-45




13 APR 2011

ԲԱԿԱՓՈ ԳԵՎՈ
(ՍՍՀՖՀ ՊՆ)

4.

804



Մ Ե Ր Ծ Ո Ւ Յ Թ

H A P M.
2-7902.

891.99
0-45


ԲԱՆԿՈՐ ԳԵՎՈ
(ՍՏԵՓՈՒՆԻ)

28

Ն Ա Խ Ո Ր Յ Ա Կ Ի Ն

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՅՈՐ Ա.



ՍՍ.ԽԵՆԴ.Գ.Ս.ՄԻ
ԹԻՖԼԻՍ — 1931

ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Համաշխարհային պատերազմն իր ամենատաք շրջանումն եր: 1915 թ. կիսերին ռուսական զորքը յետ եր նահանջել իր գրաված տաճկական մի շարք քաղաքներից: Անդրկովկասը, մասնավորապես՝ Թիֆլիսը խուճապի յեր մատնվել: Քաղաքի հարուստները հապճեպով փախչում եյին գեղի հյուսիս, իսկ միջակ ու չքավոր բնակչությունն սպասում եր իր ճակատագրին:

Հեռագիրը հաղորդեց, թե տաճկական զորքի մի մասը մտել և Սարիղամիշ, իսկ մի մասն ել Ռիթիի վրայով բռնել և Ղարսի ճանապարհը: Դրությունը լուրջ եր ու կրիտիքական: Ցարական գեներալները և բարձրաստիճան ծրիակերներն իրենց ընտանիքները վաղուց եյին փոխադրել ապահով վայրեր: Վորոնցով-Դաշկովի պալատում գիշեր-ցերեկ արտակարգ նիստեր եյին տեղի ունենում: Դրությունը փրկելու համար: Վճռել եյին լնչ գնով ել լինի, թեկուղ միլիոնավոր մարդկային զոհերի գնով, փրկել Ղարսը անկումից:

* *

Մայիսյան ծիծաղկոտ առավոտներից մեկն եր: Մառախուղը գեռ չեր քաշվել Ֆունիկուլյորի լեռան գագաթից: արկը նոր եր իր առաջին ճառագայթները

Սախելքամի 1-ին առարկան
Գրասեպ № 156:
Պատվեր 144: Տիրաժ 1500:



40543-67

փոել տների կտուրներին. քնից նոր արթնացած մարդկակ շտապում եյին իրենց գործին. մեծ ու փոքր, յերիտասարդ թե հասակավոր դիմում. եյին շուկա կամ գործարանները: Քաղաքի հրապակներից մեկի կենտրոնում կախված կառավարական մի նոր հայտարարության շուրջը խմբվել եր մի մեծ բազմություն. գործի շտապող քաղաքացիները կանգ եյին առնում և հետաքըրքությամբ կարդում այն, իսկ նրանք, վորոնք չեյին կարողանում հավաքված մարդկանց զլիների վրայով ջոկել փակցրած հայտարարության մասը տառերը, ինդրում եյին մոտիկ կանդնածներին բարձրաձայն կարդալ: Սակայն վնչ վոք չեր վստահանում բարձր կարդալ, վարովնետե անց ու դարձ անող վոտիկանը, մարակը ձեռին, քշում եր, ասելով. «Ո՞վ կարկարդացել ե, թող հեռանա, չխանգարի մյուսներին...»:

— Տիգո ջան, Տիգո, նորդ ողորմի, մի դու ելա իմաց արա՝ ի՞նչ ա գրած եղ անդերումը, — ասաց զուրգայար Բարսեղը հայտարարության մոտիկ կանգնած իր հարեան գրաշար Տիգոյին:

— Ենքան ել լավ բան չի. առաջին ու յերկրորդ կարգի ապաշխնեցիներին կանչում են...

Այս ասելով, Տիգոն ձեղքեց բազմությունը, մոտեցավ իր հարեան Բարսեղին, կամաց ի՞նչ - վոր փըսփաց նրա ականջին, ապա յերկուսով հեռացան հրապարակից:

Ամբողջ քաղաքը իրարանցման մեջ եր: Ամեն տեղ՝ գործարաններում, հիմնարկություններում, շուկաներում, փողոցներում, տներում՝ խոսակցության նյութը նոր զինակոչն եր: Զկար ընտանիք, վոր չունե-

նար առաջին կամ յերկրորդ կարգի (արտօնյալ) զին - վորացուներ: Ամենքը հետաքրքրվում եյին այդ հարցով:

Փոքր ինչ ուները ներկայականները՝ վորը փողի զուռվ, վորը ծանոթների միջոցով, վորը սուս հիվանդության պատրվակով — աշխատում եյին զլուխներն ազատել. նույնիսկ շատ ծառայողներ, վորոնք աշխատում եյին զինվորական իշխանությունների իրավասության ներքո գտնվող ձեռնարկություններում, ազատվում եյին զինվորակոչից, իսկ նրանք, վորոնք զուրկ եյին այդ «պատվից», պիտի զնային մեռնելու հանուն «հայրենիքի» և «մանր ազգերի ազատության», — այս եր ցարի որվա լոգունզը: Վերջիններիս թվին եյին պատկանում զուրդար Բարսեղն ու գրաշար Տիգոն:

* *

Քաղաքի յետ ընկած փողոցներից մեկում, մի կիսաքանդ շինության ներքնահարկում, նեղլիկ նախասենյակը տանում եր դեպի մի լայն ու ընդարձակ խոնավ սենյակ, վորի պատուհանները կալած եյին փողոցի մայթին, իսկ կամ - կարսակին ել բաղկացած եր մի թալթից, 4 — 5 ճռճըռան աթոռներից, մի սեղանից, վորի վրա զցած սփոռոցի գույնզգույն կարկատանները հիշեցնում եյին այդ ժամանակները հաճախ հրատարակվող «ռազմաբեմի քարտեզները»: Սենյակի մի անկյունում զրված փոքրիկ դարակին թափված եյին գրքեր ու լրացրներ, իսկ մյուս անկյունում զըրված ջրի կարասը, իր տակի թիթեղյա տաշտակով, հիշեցնում եր բուրժուական դահլիճները զարդարող արտասահմանյան արվեստագետների կերտած մարմարյա արձանները...

Թաղթի մի անկյունում, վերմականման ցնցոտի-
ների տակ դեռ քնած եյին Տիգոյի վոսկեզանգուր չորս
տարեկան Ստեփանն ու սևաչյա, կարմրաթշիկ վեց
տարեկան Քնարիկը, իսկ նրանց մայրը՝ Մարոն նոր
եր հեշտայեռը լցրել անկյունի կարասից ու գնացել՝
տաս կոպեկի ածուխ գնելու մոտակա ածխավաճառից:
Հենց վոր ածուխը լցրեց հեշտայեռի մեջ, գնաց հաց-
թուխից ատպարիկ հաց վերցնելու. բայց այս անդամ
հացթուխը մերժեց, թերթելով իր կեղտոտ տետրակը,
հաշվեց, տեսավ, վոր պարտքը տաս ոռություց անցել
ե, գլուխը թափահարեց ու սկսեց նախատել.

— Ընչի ժամանակին չեք վճարում. չե՞ վոր Տի-
գոն խոստացավ շաբաթ որը փողը բերել, տես, քնոյ-
թիկ այս անդամն ել կտամ, վաղվանից՝ մինչև փողը
չբերեք՝ հացի չգաք:

Ստեփանն ու Քնարիկը զարթնել և անկողնում
խաղում, եյին, իսկ հեշտայեռն իր թշոցը փոխել եր
արդեն քըթ-քըթոցի. գոլորշին այնքան ուժեղ եր
ժայթքում հեշտայեռի փոքրիկ կլոր արանքից, վոր
սենյակի անկյունում խաղացող Ստեփանին ու Քնա-
րիկին աշխուժացրեց, նրանց թեյի ախորաակը գրգոհց,
նրանք ուրախ - ուրախ վեր ցատկեցին, հագան իրենց
ցնցոտիներն ու պատրաստվեցին թեյ խմելու. Մարոն
յերկու հացից մեկը դրեց պահարանում, իսկ մյուսը
կտրտեց, թեյի հետ ուտելու համար, յերեխաները ըզ-
գուշությամբ թեյը բաժակից լցնելով ափսեները՝ խը-
մեցին, մի-մի կտոր հաց վերցրին և ուտելով գնացին
խաղալու. Մարոն ել թեյի հետ մի կտոր հաց ուտե-
լուց հետո՝ հավաքեց սեղանը, ապա վերցրեց յերեխա-
ների պատառոտած շապիկներն ու սկսեց հարմար
կտորներով կարկատել:

* *

Այդ որը Տիգոն սովորականից շուտ եր գնացել
գործի, վորովհետև մինչև զանգը տալը մի փոքրիկ
թռուցիկ պիտի շարեր: Նա խոզեցինների աչքին դուր
չեր գալիս, վորովհետև մի քանի անգամ նրա պատ-
ճառով տպարանը իշխանության կողմից խուզարկվել
եր. թեպետ կասկածելի բան չեր գանվեր բայց Տիգո-
յին տարել եյին պահնորդական բաժանմունք և մի
քանի անգամ բանտ նստացրել: Այդ արդեն բավական
եր, վոր նրա վարկը զցեյին և իբրև «անհուսալի»
բանվոր ճանաչեյին խոզեցինները: Առհասարակ նրան
վնչ վոր յերկարատև աշխատանքի չեր ընդունում. ար-
պարանատերերը, յեթե շտապ գործ եյին ունենում,
այն ժամանակ միայն Տիգոյին ժամանակավոր աշխա-
տանք եյին տալիս: Այդ եր պատճառը, վոր Տիգոն մի
ամիս շարունակ միենանույն տեղը չեր կարողանում աշ-
խատել: Տիգոն ուժեղ կամքի տեր եր և արտաքուստ
այնքան լուակյաց, վոր կասկածի վնչ մի տեղիք չեր
տալիս: Վորքան ել իր ամենամոտիկ ընկերներն աշ-
խատում եյին նրանից խոսք հաներ չեր աջողվում այդ,
և Տիգոյի դեմքը պարզել չկարողացան նույնիսկ բան-
տերն ու պահնորդական բաժինը: Նա մի շաբաթ աշ-
խատում եր, յերկու շաբաթ անգործ մնում, մի որ
կուշտ, յերկու որ քաղցած՝ իր յերկու յերեխաների և
կնոջ հետ միասին: Նույնիսկ հացթուխի պարտքը նա
չեր կարողանում ժամանակին վճարել վոր յերեխա-
ները գեթ ամեն որ ցամաք հաց ունենային:

Այժմ Տիգոն չորս որվա աշխատանք եր ճարել:
Առիթից ոպավելով՝ մի փոքրիկ թռուցիկ պիտի շարեր:

Անդրկովկասում գոյություն ունեցող բոլոր կուսակցությունները—մենչեւիլ, դաշնակ, կադետ և այլն—մի մարդու պես աջակցում եյին ցարական կառավարությանը՝ պատերազմն իր «հաղթական վախճանին» հասցնելու և «մանր ազգերին ազատություն պարզեվելու» համար։ Միայն մի բուռն բոշկիկներն եյին, վոր զգում եյին պատերազմի պատճառած սարսափները և աշխատում եյին բանվորներին ու գյուղացիներին որ առաջ ազատել «թնդանոթի միս» դառնալուց։

Տիգոյի շարած փոքրիկ թուուցիկը բոլշևիկների կողմից մի նախազգուշացումն եր, վարով առաջարկվում եր աշխատավորությանը չհավատալ ցարի և նրա լակեյ կուսակցությունների կեղծ հավաստիացումներին։ «այս պատերազմը, — ասված եր թուուցիկի մեջ, — վնչ մի ազգի աղատություն չե բերի, այլ ընդհակառակը, ամեն ազգի սլայքարող պրոլետարիատի լավագույն զավակների գերեզմանն և պատրաստում», և հրավիրում եր գասակարգային կովկ։

Դասակարգային զիտակցությունը, պրոլետարիատի թշնամիների գեմ պայքարը Տիգոյի մեջ այնքան հասունացել, միս ու արյուն եր դարձել վոր նա պատրաստ եր վնչ թե մի փոքրիկ թուուցիկ շարել, այլ և ամբողջ տպարանները «գողանալ», թեկուղ նրան դրա համար կախաղան հանեյին։ Յեվնա մինչեւ ժամի ութը, յերբ տրվում եր զանգը, շարել խնամքով վաթաթել եր թղթի մեջ և դրել վերնազգեստի գրավանը, վոր դործից հետո հետու տանի։

Այդ որը նրա աշխատանքի վերջին որն եր, չորս որում կարողացավ վեց ոռոբլի վաստակել վորից չորսը

ավակ հացթուխին և խնկըեց, վոր ներողամիտ լինի, չմերժի որը 4 ֆունտ ապարիկ հաց տալու, շաբաթորը դուցի ելի կարողանա փող հասցնել, մնացած յերկու ոռոբլով շաքար, թեյ, ածուխ և նավթ գնեց։ Այդպիսով մի քանի որ տունն ապահով եր, գոնե ժամանակավագես սովի ուրվականը վտարվել եր Տիգոյի տնից։ Ուրախ եր Մարոն, վոր հացթուխին այլևս չի պախարակելու նրան՝ իր ամուսնու «անճշտապահության» համար։

Այդ որը Տիգոն սովորականից ավելի տխուր եր, նա ամբողջ որը բան չեր կերպել, շարունակ մտածում եր. ինչ պիտի լինի իր ընտանիքի դըությունը, յեթե ինքը ներկայանա զինվորական ատյանին, վերջին ժամկետին յերկու որ եր մնացել, իր հասակակիցների մի մասն արդեն ներկայացել եր, շատերը փողի զոռով աղատվել եյին, իսկ ինքը վնչ հիվանդ և և վնչ ել փող ունի, վոր կաշառքով մի կերպ զլուխն աղատի։ Այդ հանգամանքը նրան այնքան մտատանջություն չեր պատճառում, վորքան այն միտքը, թե «ինչու դնալ, ում համար մենակ, հանուն ինչի ընտանիքը սովի մատնել»... Բայց աղատվելու հնար չկար։ Այդ գիշերն ել Տիգոն անքուն անցկացրեց, միայն առավոտյան դեմ մի յերկու ժամ նրա աշքերը փակվեցին, բայց չարաճճի Ստեփանի ձայնի վրա շուտ ել բացվեցին։

* *

Ժամը 9-ը դեռ չեր լրացել, յերբ Տիգոյի տան դռուք ճռապելով բացվեց և դռան մեջ յերկաց Բարսեղի ծիծաղկուտ շեկ դեմքը։

— Բարի լիս, ինչ բանի յեք, վո՞նց եք։
— Ասծու բարին, շնորհակալ ենք, լավ ենք, —
պատասխանեց Մարտոն՝ աթոռ առաջարկելով Բարսեղին։
— Հը, ինչ ա ելեւ խի յես ըդհենց բեղամաղ նստել,
անաշենի տղա, գլուխի մի վեր քաշի, տենանք. հենց
իմանաս աշխարհքը բաժմիշ ա ելեւ ու նրա դրստելը
ըեզ են թամբահ արել, — ասաց Բարսեղը քմծիծաղ
տալով Տիգոյին, վոր մինչև այդ գլուխը ձեռքերի մեջ
առած՝ ինչ - վոր մտմառմ եր ինքն իրեն. տեսնելով
Բարսեղին, նոր միայն սթափվեց ու գլուխը բարձրա-
ցրեց, կարծես նոր ուշըի գալով։

— Ներողութուն, Բարսեղ ջտն, կողերս ծանրա-
ցել եյին, գիշերս չեմ քնիլ ես անտեր թաղթաբիթի-
ների ձեռքից. ասա մի տեսնեմ, ինչ կա, ինչ չկա թա-
գա խարար։

— Հա դու ինձ ասա, ես թագա պրիվիվը քեզ
ելա համեմ, թե չե։

— Բա չի համարմ... եղուց գնալու յեմ ներկա-
յանամ...»

— Շաշ չիմս, հենց ըսոր ևեթ տանիլ դեմ քեզ՝
աղատվելու թուղթը տամ։

— Ի՞նչպես, ախր յես վոչ հիվանդ եմ, վոչ փող
ունիմ, վոչ ծանոթ...»

— Եղ քու բանը չի. ինձ հետ զաբուլ չիմս, մեռ-
նեմ — հետս մեռի... Այս ասելով՝ հանեց մի փոքրիկ
քառակուսի թղթի կտոր, վորի վրա գրված եր։

«Дано сие плотнику Барсегу Саакову в том, что
он от 30 мая 1915 г. работает на Эрзерумской военной
жел. дор., что подписью и приложением именной печати
удостоверяю.

Подрядчик П.»

— Բայց յես գուրզարությունից բան չեմ հաս-
կանում, Բարսեղ ջան, ինձ վո՞նց կվերցնեն։

— Եղ, ելի յեմ ասում, քու բանը չի... յես ել
հետդ գալիս եմ. գուռը սրտալի բաց կանես, կասես,
վոր յես ուստա յեմ, յես ել կասեմ, վոր սրան վաղուց
ճանաչում եմ, ինձ հետ շատ ա բան արել... Տն խելքի
արի, քառասուն մարդ ենք գրվել, քառասունի մեջ
քսանհինգը ուստա յենք, մնացածներն ել «պոժուս-
տա» խալիս ենս. Որենն ել հինգ մանեթ տոնլուզ ա,
վագն նստենք՝ որը գրվում ա... Ճամփեն ել կա-
զիոննի ա...»

Տիգոյի գեմքը փայլեց. նա ժպտաց, մեկ ել կար-
դաց Բարսեղի թուղթը, աչքերին չհավատաց, նորից
սկսեց մտածել. «Յեթե այստեղ՝ հեռու Սարիղամիշում
նկատեն, վոր ինքը դուրդյար չե և հանեն գործից...
ինչ պիտի անի, ուր գնա»։

— Հը, Տիգո, ինչ թաղաղան թխպեցիր...
արա վեր կաց գնանք, կգրի, բեն ել (կանխավճար)
կտա, գալող ամսի 2-ին ճամփա կնկնենք։

— Ի՞նչ բեն։

— Բա, հրես, հինգ որվանը ես զլիից տալիս ա,—
ասաց Բարսեղը առանձին ապլոմբով ու հանեց գրա-
նից 25 ոռոբին, ցույց տվեց։

— Դու ինչ կասես, Մարտ, — հարցրեց Տիգոն
կողը։

— Վոնց որ խելքդ կարում ե, ենպես ել արա,
համա իմ կարծիքով՝ փոխանակ գնաս՝ ճորտ դառնաս,
ով գիտի, գուցե և այստեղ նահատակ լինես՝ ավելի
լավ ե Բարսեղին լսես...»

— Դե վոր եղակես և, դնանք, Բարսեղ ջան:

Մի ժամից հետո Բարսեղն ու Տիգոն կապալառույի գուանը սովասում եյին:

Արկը նոր եր թեքվել յերբ Բարսեղն ու Տիգոն մի փոքրիկ կացին, բերդարիր (յերկար սղոց), ուրագ, ունդա, արշին՝ մի նոր խուրջինում դրած՝ տուն վերադարձան:

— Հարսի, ես զիմի մարթիր բաժինն ա, — կատակով ասաց Բարսեղը Մարոյին:

— Թուղթը տվի՞ն թե չե, — կասկածով հարցրեց Մարոն:

— Հենց թուղթ են տվել, վոր քարին դնես, քարը կճաքի: Հա, հարսի ջան, ասում են, վոր Մարիղամիշ ցուրտ տեղ ա, տաք շորերից-բանից հազրի Տիգոյի համար, վոր եղուց չե, ելոր ճամփա յենք ընկնելու: Յես ել դնամ, կնկանս ասեմ, վոր թադարեք տեսնի, — Բարսեղը մնաս բարով ասաց ու հեռացավ:

Տիգոն հանեց գլուխից կապալառույի տված թուղթը. Մարոն ել հետաքրքրությամբ սկսեց կարգավ, վերցրեց ձեռքը, զննեց, շուռ տվագ մյուս յերեսը, ապա նորից դարձրեց, այս անգամ տվելի մոտեցրեց աչքերին, կարդաց կնիքի տեկստը ու վերադարձրեց Տիգոյին: Վերջինս զգուշությամբ ծալեց, զրեց գրապանը, ապա վերցրեց մատիտն ու սկսեց հաշվել իր այդ որվա դնած իրերը, համեմատեց խանութպանի տված հաշիվները. Ճիշտ եր՝ ուժ ոուբլի եր ծախսածը. մնում եր տասնյոթ ոուբլի, վորը և տվեց Մարոյին՝ պատվիրելով, վոր հացն ու թեյն անպակաս անի, մինչև ոոճիկ կըս-

տանա և փող կուղարկի: Ապա սկսեց յերկար, շատ յերկար նայել Մարոյի գեմքին: Մարոն չեր գիմանում նրա շեշտակի հայացքին. մերթ աչքերը հեռացնում եր նրանից, մերթ զլուխը կախ զցում, մերթ դեպի վեր նայում:

— Մարո, մարդ ենք, թե պատահեց, վոր փողն ինձանից անկախ պատճառներով ուշ զրկեմ, կամ գուցե ախտեղ ինձ անպետը ճանաչեն, չկարողանամ փող վաստակել, ինչ պիտի անես...

— Դու ինձ վստահ պիտի լինես, կարծում եմ, յեթե բանն այլակեղ հասնի, ծառայության կմանեմ, իսկ յեթե այդ ել չեզավ՝ լվացը անել ոո լավ զիտեմ, դու անհնդ կաց, յերեխանց հացը անպակաս կանեմ, քանի կենդանի յեմ, միայն թե... քո կասկածները... քո ինանդուությունը...

Մարոյի աչքերը լցվեցին արցունքով, հեծկլանքը խեղդում եր կոկորդը: Տիգոն մոտեցավ, հանգստացրեց, ներողություն խնդրեց ասելով, վոր ինքն ել չգիտեր, թե ինչու այդպիսի հարց տվեց, համբուրեց ու շտապով գուրս գնաց:

Հավլաբարի նեղիկ փողոցներից մեկի ծայրին Տիգոն մի փոքրիկ տան դուռը չորս անգամ խիեց ու յերկու անգամ հազար: Այդ Մ-ի բնակարանն եր, ուր դեռ ձեռքի փոքրիկ մեքենայով տպում, եյին նրա մի քանի որ առաջ շարած թուցիկի վերջին որինակները: Տիգոն հայտնեց նրանց իր գնալու մասին. ընկերները հավանություն տվին. հանձնելով նրան մի ահազին կապոց բբոշուրներ, բերանացի պատվերներ տվին. ապա մի փոքր սրախոսելուց հետո համբուրվեցին և, գնաս բարով ասելով, մինչև դուռը ճանապարհ դրին Տիգոյին:

* * *

Հունիսի 2-ի առավոտը թիգլիսի կայարանի դահլիճի անկյունում փոված եյին գույնզգույն կապոցներ, պարկեր, փոքրիկ փարզակներում փաթաթած անկողիններ, քթոցներ, հյուսնի գործիքներ, վորոնց շուրջը խոնված բազմությունը սպասում եր գնացքին:

— Բոլորդ այստեղ եք, վոչ վոք պակաս չե՞ — հարցրեց հաստափոր, բարձրահասակ, խոժուաղեմ կապալառուն Բարսեղին, վորին նա ավագ վարպետ եր նշանակել:

— Բոլորը պատրաստ են, քառասուն մեկ մարդ են, պարոն Միքայել — պատասխանեց Բարսեղը և հանդիսավոր կերպով իր հայացքն ուղղեց շուրջը հավաքված վարպետներին:

Տասը բոսկեյից հետո զնացքը մոտեցավ պլատ-ֆորմին՝ բայց վնչ մարդասար վաղոններով, նրանց հակատին դրված եր՝ «28 ստորին աստիճանավոր կամ 8 ձի»: Ըստ ինքյան հասկանալի յեր, վոր այդ ախոռ-վագոններով այնքան ել «կարգին» մարդիկ չպիտի ուղնորվեյին, այլ բանվորներ, վորոնց տեղ կարելի յեր տեղավորել 8 ձի...

Յերկու վագոնում տեղավորվեցին դուրսար վարպետները, վորոնցից շատերին Տիգոն չեր ճանաչում: Նա աշխատում եր մոտենալ ամենքին՝ ծանոթանալ, զրուցել: Տեսավ իր դիմաց նստած բազաղ վ.՝ ին, ածխավաճառ Ս.՝ ին, յերաժիշտ Մ.՝ ին, մրգավաճառ Խ.՝ ին, քաղցրավենիներ վաճառող Կ.՝ ին... Տիգոն փոքր ինչ սրտապնդվեց, ուրեմն ճիշտ եր Բարսեղի ասածը, թե բոլորը դուրսար չեն, իր նման դուրսար դառած մար-

դիկ շատ կան «մեծ վարպետի» խմբում, ուրեմն պետք ե համարձակ լինել չպետք և ամաչել կամ վախենալ...

Յեվ մեր Տիգոն կարճ ժամանակամիջոցում, մինչև յաղախլո կայարանը, արդեն ամենքի հետ ծանոթացի եր: Իրեն ճանաչողներ ել կային: Բայց թե Տիգոն և թե նրան ճանաչողները չեյին գտահանում միմյանց զբաղմունքի մասին խոսք բաց անել, վորովհետև վարպետները կարող եյին նրանց իբրև «աշակերտներ» ընդունել և կապալառույի ականջին հասցնել:

Տղերքը հետզհետեւ մտերմացան, զրույցները փոխվեցին սրախոսությունների, հանելուկների, անեկդոտների: Նրանք սկսեցին պատմել հետաքրքիր եպիզոդներ, մեջ տեղ բերին թառ, դափ, գարմոն, պար, յերգ, կրիս: Յերկու որվա ուղևորությունը*) Տիգոյին վոչ թե չձանձրացրեց, այլ ընդհակառակը մեծ բավականություն պատճառեց, նա արդեն ձուլվել եր Դադեթեցիլ յերգիչ ուստանների հետ ու նրանց աչքում մի առանձին հեղինակություն ձեռք բերել, իբրև «լավ գիր իմացող» և «ուսումնական»...

Այդ որվանից նրան «ուստա Տիգո» եյին անվանում:

*

Արդեն մի շաբաթ առաջ մինչև Տիգոյի տեղ հասնելը, Սարիղամիշը և Ոլթին մաքրել եյին տաճիկ-ներից: Վրա հասած Բակինսկի պոլկն ու Դոնի շրջանի

*) Մարդասար զնացքը մինչև Սարիղամիշը 16 ժամումն եր գնում, իսկ ապրանքատարը շաբաթներով ուշանում եր: Յերկու որուեց նրանց ուղևորությունը, վորովհետև ձիյերի փոխարկն մարդիկ եյին գնում:

կողակները տաճիկներին յետ ելին քշել մինչև երդեռում և այնտեղից ել՝ դեպի Յերզնկա, Մուշ, այնպես վոր յերբ Տիգոն իջավ Սարիղամիշի կայարանում, կարծեց, թէ այնտեղ վոչինչ չի պատահեր վորովհետ մարդիկ զբունում, յերգում ու աշխատում եյին:

Հենց վոր գնացքից «ուստիքը» իջան, կապալսուի դործակատարը նրանց առաջնորդեց դեպի նախորդ նրանց համար պատրաստած տախտակե յարակները, վորոնք գտնվում եյին կայարանից յերկու վերստ հեռավորության վրա, անտառի խորքում, մի գմբեթաձե բլուրի ստորոտին:

Եերկրորդ որն իսկ ամենքին գործի դրին, վաղորոք փոքրիկ խմբերի բաժանելով: Տիգոյի խումբը բաղկացած եր 10 մարդուց, վորոնց ավագ վարպետը Բարսեղն եր. այդ խումբը պիտի անտառի հաստ շամի (сосна) ծառերը, վորոնց վրա նախորդ նշաններ եյին դրված՝ կտրատեր, տաշեր, մաքրեր, ապա տար մյւս խմբերին, վոր նրանք իրենց հերթին լավ մաքրերուց և հղկելուց հետո, փոքրիկ բնակարաններ շինեցին երդերումի նեղ յերկաթուղու ծառայողների համար:

Մեր Տիգոն՝ գոգնոցը կապած, կացինն ու ուրագը մի ձեռքին, մյուսում բիբլարիբը բռնած, ականջին մատիտն ամրացրած, գոտումն ել արշինը կիսածալ խրած՝ ամեն առավոտ Բարսեղի հետ միասին գործի յեր գնում: Յերեք-չորս որից հետո նա այնպես ընտելացավ, վոր յերբ կապալառուն կամ նրա գործակատարները գալիս եյին՝ հիացած եյին մնում Տիգոյի վարժ աշխատանքի վրա, մինչդեռ հին, փորձված, մաքուր գործին ընտելացած ուստիքը դժվարանում եյին այդ կոպիտ աշխատանքին վարժվել և շարունակ կապալառույի նկատողություններին արժանանում:

* * *

Յերկու շաբաթից հետո Տիգոն մի գումար փոխադրեց Թիֆլիս: Եյս անգամ Մարոն, բացի հացի ու թեյի պաշարը գնելուց, յերեխաներին զարդարեց նոր հակուստներով: Շաբաթական յերկու համակ եր ուղարկում Տիգոն և յերկումն ել ստանում եր Մարոյից: Տիգոն գոհ եր, վոր ընտանիքն իրենից չի զգոնում. նա իրեն յերջանիկ եր զգում, վոր յերեխաները կուշտ են: Բայց նա մոռացկու մարդ չեր. նա իր ընտանիքի հոգսը քաշելուց բացի՝ ուրիշ շատ հոգսեր ել ուներ: Ում համար եր նրա զամբյուրում զրված կապոցը...

Կիրակի որերը Տիգոն գնում եր Սարիղամիշի շուկան, ծանոթանում եր իր նման բանվորների հետ, զրույց անում, մոտիկանում, ապա՝ մի քանի հանդիպուներից հետո՝ մտերմանում:

Կարճ ժամանակի ընթացքումնա իր շուրջը հավաքեց 50-ի չափ բանվորներ, վորոնց կիրակի և տոն որերին տանում եր անտառի հեռավոր խորքերը, իր բերած բրոյցուները բաժանում նրանց, շատ անգամ ինքն եր կարգում և բացատրում նրանցում. արծարծված հարցերը, շատ անգամ ել քաղաքական հարցերի շուրջը խոսում, պատերազմի իսկական պատճառները բացատրում, նրա պատճառած աղետալի հետեանքները մատնանշում:

Տիգոն դարձել եր Սարիղամշի բանվորներին միացնող ողակը: Հենց վոր թյուրիմացություն եր տեղի ունենում, կապալառուներն ուզում եյին բանվորների արյունը ավելի քամել խկույն զալիս խորհրդակցում եյին Տիգոյի հետ. նա յել իր խելացի ցուցմունքներն



եր տալիս, վոգեսրում բանվորներին և միմնույն ժամանակ հորդորում զգույշ լինել քանի վոր գտնվում են գործող բանակում, ամեն մի սխալ քայլը կարող ե իր հետ դժբախտություն բերել, ամեն մի սայթաքում կուժեղացնի դաշտային դատարանի գործունեյությունը, քանի վոր, առանց այդ ել ամեն որ միայն Սարիղամշում տասնյակ կյանքեր եր խավարում:

Բայց կապալառու Միքայելից, այդ անտառում շատ ուրիշ կապալառուներ կային, վորոնը զանազան տեղերից բանվորներ եյին հավաքել ու բերել լցրել Սարիղամիջ: Այդ կապալառուներից ամենաաչքի ընկնողը Դ.-ն եր, վորը պայթուցիկ նյութերով անտառի ստորին փեշերում գտնվող բլուրները պիտի քանդեր ու ճանապարհ շիներ՝ յերկաթուղու նոր գիծ անցկացնելու համար: Նրա մոտ աշխատում եր 90 բանվոր, բոլորն ել ջանել, առույգ, ջլապինդ, գեղեցկատեսիլ տղամարդիկ:

Մի որ կեսորին, յերբ ամբողջ Սարիղամիշի բանվորները ճաշի եյին նստած իրենց բարակներում ու խցերում, յերբ Տիգոն ել Բարսեղի հետ միասին ապուր եյին ուտում զբույց անելով, մի ստորյերկրյա պայթյուն լսվեց. ամբողջ Սարիղամիշը ցնցվեց. մարդիկ խելագարի նման դուրս թափիցին, անտառի արևելյան մասը մի բոպե մթնեց, յերկնքից փայտի կտորներ, պատառուտած հագուստի ծլանքներ, մարդկային մարմի մասեր — վոտներ, գլխներ, ձեռքեր փորոտիք, մսի կտորտանը ընկնում եյին գետնին, խաղում, թպրտում, ապա մնում անշարժ... Ամբողջ Սարիղամիշը թափեց Դ.-ի բարակի տեղը, ուր վոչինչ չեր մնացել բացի մի քանի առաջնից ու թիթեղյա զամբյուղից, վոր թափած եյին պայթյունից առաջացած մի մեծ փոսի մեջ...

Դ.-ն այդ որը «Շվեյցարիա» հյուրանոցում պաշտոնյաների հետ քեֆ եր անում, Թիֆլիսից իրեն «Հյուր» յեկած յերկու գեղեցիկ կանայք ասիական գործիքների նուրբ նվազի տակ զվարձացնում եյին նրանց իրենց պարերով... Սեղանը լիքն եր շամպայնի ու զանազան թանկագին խմէջքների շշերով. լակեյները չորս կողմը կանգնած Դ.-ի յերեսին եյին նայում, նրա հրամանին սպասում...

Իսկ այստեղ գեպքի վայրում, սապյորներն ու Կարմիր Խաչի մասերը փողու, ցեխի միջից հավաքում, արկղներն եյին լցնում Դ.-ի գողացած պայթուցիկ նյութերին զոհ զնացած յերիտասարդ բանվորների մարմնի մասերը...

Վարպիսի խրախճանք...

Իննուն կորովի մարդկանցից մնացել եյին խեղաթյուրված մասնիկներ:

Այդ որը ամեն ինչ գերջացավ: Յարական գեներալներն ու նրանց վոտները լիզող պաշտոնյաները զոհ եյին, վոր իրենց սիրելի կապալառու Դ.-ն դեպքի ժամանակ բարակում չեր յեղել, հետևապես և նա վհչ մի բանի մեջ մեղավոր չե: Կազմված արձանադրության մեջ ասված եր, թե ճաշի ժամանակի հավաքված բանվորները խաղալիս են յեղել պայթուցիկ նյութերի հետ և անզգուշությունից պայթեցը մի արկղ գինամիտ... «Հանցավորները սպանված են, դատելու մարդ չկա»...

Այսպես գործը փակվեց:

Յերկու շաբաթից հետո այդ ավերակ բարակի տեղը մի նոր, ավելի ընդարձակ բարակ կառուցվեց: Այժմ 90-ի փոխարեն՝ նրանց նման 150 յերիտասարդ

մարդկանց բնակեցրին, վորոնք իրենց ժիր բազուկներով ձեղուում ելին սարի լանջերն ու ձանապարհ բաց անում... իսկ Դ.Ն. յերեմի-յերեմին հեծնում կարմիր նժույգ՝ գալիս եր նայում իր ճորտերին, դատարկ խոսքերով վոգերում, սուտ խոստումներ անում ու հեռանում... իսկ իր գործակատարներին պատվիրում եր աշալուրջ հսկել, վոր լավ աշխատեն և ժամանակից ել մեկ կամ կես ժամ գործը ուշ թողնեն...

Փող բաժանելու որերը Դ.Ն ինքն եր հաշիմսերը մաքրում բանվորների հետ, ամեն մեկին հաղիվ Յ-ական ուռելի կանխիկ դրամ եր տալիս, շաբաթված ծախսված շաքարը, հացն ու յուղը նրանց վրա կրկնակի, յեռակի հաշվելով, այնպիս վոր բանվորների հաշվին բերած մողի՝ Յ/Հ-ը նորից յետ եր տանում... նստում եր կարփող՝ Յ/Հ-ը նորից յետ եր տանում... նստում եր քեֆին...

* *

Այս բոլորը տեսնում եր Տիգոն: Տեսնում եր ու բորբոքվում, մինչև հոգու խորը զայրանում... Վրեժինդրության տեսչը զարթնել եր նրա մեջ, վորքան ել նա իր զայրութը ժամանակավորապես խեղում եր, այնուամենայնիվ ատելությունն ու զբլանքը գեպի Դ.Ն զնալով սաստկանում եր, և ամեն իրիկուն, գործը վերջացնելուց հետո, միայնակ անտառից զնում եր շուկա, նայում «Շվեյցարիա» հյուրանոցի պատուհան-շերից, արդյոք այնտեղ քեֆ չի անում Դ.Ն, չին պարում նրա տարփածուները... ապա կրկին վերադառնում եր ու անխոս պառկում իր բարակ վերմակի տակ:

Մոտ մի սմէկս Տիգոն հանգիստ չուներ: Նրա աչքից չելին հեռանում 90 բանվորների խեղաթյուրված

մարմինների մասնիկները. բանվորների, վորոնց հետ յերեմն նա խոսել-զրուցել եր, վորոնք նրան շատ անգամ թեյով հյուրասիրել ելին ու պատմել իրենց ցավերը...

Տիգոն ել առաջվա ասող-խոսող, զրույց անողը չեր. այդ նկատում ելին հենց իր ընկեր - ուստեղը, նրանց հարցին պատասխանում եր,

— Հիգանդ եմ, քեֆ չունեմ, մրսել եմ...

Յեկ մի շաբաթ իրիկուն Տիգոն վճռում ե «զնալ բժշկի մոտ...»: Գիշերվա ժամը տասին նա կանգնած է Սարիղամշի կենտրոնական վողոցում, վորի անկյունում գտնվող «Շվեյցարիա» հյուրանոցի պատուհանների մոտ ահազին բազմություն խոնված՝ նայում ե ու հիանում Դ-ի տարփածուների պարով: Դ-Ն առաջվա նման ուրախ ե ու յերջանիկ, խմում ե ու քեֆ անում... Ահա ժամը 12-ն ե արգեն. հյուրանոցի պատուհանի փեղկերը փակվեցին. փողոցում մարդ չկա այլևս. մթության մեջ վոչինչ տեսնել չի լինում: Ամենուրեք տիրում ե մեռելային լուսություն. միայն մերթ ընդ մերթ լսվում է «Շվեյցարիա» հյուրանոցի բարակ պատերից Դ-ի խուլ գոռգոռոցը կամ կանացի ձայներ...

Կամաց բացվում են հյուրանոցի նեղ դաները, յերկու պարող տարփածուները Դ-ին թեանցուկ տանում են գեալի տուն: Մերթ մեկի վոտքն և սայթազում, մերթ մյուսինը դիպչում քարի, մերթ Դ-ի ծնկները ծալվում հարբածությունից, մերթ կանայք ընկնում են ու նորից բարձրանում, մերթ Դ-Ն թեքվում ե մի կողմը՝ մեկին իր տակը գցում, մյուսին՝ վրան... Մերթ ինչ-վոր յերգ են մըոմըում, յերեմն ել անկապ - անիմաստ բառեր արտասանում...

Հենց վոր հասնում են շուկայի ծայրի նեղիկ փողոցը, վոր գեղի կայարանն եւ տանում, Դ-ն վոտնաձայն եւ լսում. կանգնեցնում եւ կանանց ու հենց վոր յետ եւ նայում, յերեք պայմթյուն փակում եւ նրա բաց բերանը... Կանայք ուշագնաց ընկնում են, նորից սթափվում, յելնում են ողնություն կանչում, մաղերը փետում, արտասովոր վայնասուն բարձրացնում... Բայց Սարիղամշի բնակիչները սովորություն չունեն կես գիշերին տնից դուրս գալու, ինչ ել վոր պատահած լինի, միենույն եւ, առավոտը կլսեն, կափսոսան կամ կհայհոյեն, կանցնեն կերթան...

Վախից ու կակծից նրանք զգաստացել եյին արդեն, Դ-ի անշնչացած դիակը մի կերպ քարշ տալով՝ հասցրին տուն:

Շուկայի ձախ կողմից գեղի անտառը տանող յերկար ու նեղիկ փողոցով հեինե խուսափում եր մի ստվեր, վորի վոտի ձայնից միայն կարելի յեր իմանալ նրա մարդ լինելը: Յերբ մոտեցավ անտառին, նստեց, բաց արավ քրանքից թրջված փողկապը, խոր թառանչ քաշեց, հանեց ատրճանակը, յերեք փամփուշտ ավելացրեց կրակածների տեղ, նորից դրեց զրպանը, ապա դանդաղ քայլերով դիմեց գեղի բարակը, վորտեղից դեռ յերեռում եր պսպղացող լապտերի լույսը: Զգուշությամբ բացեց դուռը, ներս մտավ, հանեց շորերն ու մտավ վերմակի տակ:

Բարսեղը, վոր գեռ չեր քնել, սկսեց նախատել Տիգոյին.

— Ես չախիս ուր ես, այ մարդ, բա ասում եյիր՝ դոխտուրի յեմ գնմաւ...

— Գնացի, բա ինչ արի, ձանապարհին մի հին ընկեր պատահեց, տարավ իր մոտ, սկսեցինք դեսից դինից խոսել՝ ժամանակն աննկատելի անցավ:

— Հը, վոնց վոր տեսնում եմ քիչ ել կոնծել եք... խոսելուցդ ա յերկում:

— Հա, մի քիք թրջեցինք կոկորդներս:

Լուսաբացին ամբողջ Սարիղամիցը շրջապատված եր: Խորն արգեն տարածվել եր. «հայտնի կապալառու, քեֆ անող Դ-ն սպանվել եօ: Հարյուրավոր մարդիկ ձերբակալվեցին, նորից արձակվեցին մանրամասն քըննություններ, խուզարկություններ, լրտեսների գաղտնի աշխատանքներ... բոլորը ապարդյուն: Ցարտական «արդարագատությունը» գտավ, վոր սպանությունը կազմակերպողները այն յերկու շանսանետկաներն են յեղել, վորոնց և ձերբակալեց, ուղարկեց Ղարսի բերդը:

Դրանից հետո Տիգոն իրեն շատ լավ եր զգում, առաջվա նման ասող - խոսող եր, և ուստեքը զարմացան, թե «եղ ինչ դոխտուր եր, վոր մի որումը տհենց լավացրեց Տիգոյին»:

* *

Անցան դարձյալ մի քանի ամիսներ: Տիգոն ամեն ամիս կանոնավոր կերպով 80 ոռութիւն յեր սւղարկում տուն: Տնից լավ նամակներ եր ստանում. յերեխաներն առողջ եյին, կինն ել լավ եր: Նա իրեն յերջանիկ եր զգում: Այդ հանգամանքը նրան ավելի յեր վոգեռում շարունակելու իր քաղաքական միսսիան, վորով նա այնքան կլանված եր: Այժմ նրա համակրողների թիվը կրկնապատկվել եր: Նա իր ազատ ժամերը յերբեք բարակում չեր անցկացնում, այլ գնում եր մոտակա

սղցագործաբանները, յերկաթուղու արհեստանոցը, տրանսպորտի կայանները, գեմսավոյի արհեստանոցները և այլն, ուր իր ծանոթների, ընկերների միջոցով ծանոթանում եր նրանց աշխատանքի սլաքմանների հետ, լուռմ նրանց գանգատնները, անդա խորհուրդներ եր տալիս, քաջալերում նրանց։ Նրան կիրակի որերը կտեսնեցիք շրջապատված ընկերների հետ խոսելիս՝ կամ Սարիղամշից Յ վերսու գեղի Կարառւրդան տանող ձանապարհի ձախ կողմը գանմող թթու ջրի մոտերքը, կամ զեղի Ալաշկերտ տանող կարճ խճուղու աջ ու ձախ կողմերը փոված անտառում, կամ Ոլթիի ճանապարհին՝ թյուրքական զորքի սպանված ասկերների գերեզմանատան շուրջը... Ահա այս վերջին տեղն եր, ուր Տիգոն խոսելիս իր սրտի ամբողջ մաղձը թափում եր պատերազմող կողմերի հասցեյին, ցույց եր տալիս իր ընկերներին այդ թմբերի տակ թաղված հազարավոր անմեղ ասկերներին ու բացականչում։

«Սրանք ել մեղ նման աշխատավորներ եյին, սրանք ել տուն ու ընտանիք, յերեխաներ ունեն, վորոնք յերմի դեռ նամակի կամ լուրի յեն սպասում... ինչու կոտորվեցին, ում համար, սրանց քյուլֆաթն ով և պահելու, կամ սրանց ծնողները նրա համար մեծացրին, վոր սուլթանի կամ հարուստ բեյերի անկուշտ փորերը լցներու համար գան ևս զարիք տեղը, գյուլի գաւառնին... Եղավես ել մեր խալիսը, մեր հարազատները, քանի քանի հազար յերիասարդներ սրանց պես թաղված կլինեն թուրքի կամ գերմանացիների հոգումը, վորոնց ծնողները, կանայք ու յերեխաները կարծում են, թե դեռ կենդանի յեն, վերադառնալու յեն...»։ — ասում եր նա ու զայրույթից բոռնցքները սեղմում։

**

Սակայն յերկար չուեցին այս «ժամանցի» կերակիները։ Ամառվա ամիսներն անցել եյին։ Աշունը նոր եր վրա հասել, իսկ Սարիղամշի աշունը գեկտեմբեր և հունվար ամիսների յեղանակներից ել գաժան եյին։

Յեղանակների փոխվելու հետ միասին փոխվեցին նաև Տիգոյի աշխատանքը պայմանները։ Բարսեղին տեղափոխել եյին մի ուրիշ տեղ, իսկ նրա փոխարեն Տիգոյի խմբի ավագ վարպետ եյին նշանակել մի թըթված ծերուկի, վորի մեջ վոչինչ մարդկային չեր կարելի գտնել բացի վատարանելուց, հայրոյելուց, միմյանց դեմ լարելուց... Սրա ուշադրությունից չվրեակց նաև Տիգոն, վորի մասին արդեն կապալառույին հայտնված եր, թե նա գուրզաք չի, անբարեհույս և, հեղափոխական ու խոռվարապ...»

«Եվագ վարպետն» աշխատում եր իր արտելից հեռացնել Տիգոյին և հարմար առիթի յեր սպասում. շարունակ հետևում եր, բայց ապարդյուն։ Տիգոն գիտեր, զգում եր այդ և խուսափում պասալի թակարդն ընկնելուց։ Թեպես ինքը Տիգոն ել եր ուզում կապառույի հողաթափը լիզող այդ «ավագ վարպետի» արտելից հեռանալ, բայց մտածում եր՝ ուր դնալ. արհեստ չգիտի, զարիք տեղ և, գուցե նրանից ուրիշ մաքուր զործեր պահանջեն՝ նա կկարմը։ իր ծանոթների շրջանումն ել չկար մի հարմար տեղ, վոր նրանց հետ աշխատեր, վերադառնալ Թիգոյի անկարելի յեր. Մարտյի գրած վերջին նամակից տեղեկացնել եր, վոր գեղերատիրներին քանչորս ժամմավ ընթացքում ուղարկում են առաջավոր դիրքերը, լրտեսները վահանակ մի ջահել

մարդ չեն թողնում քաղաքում, ցարական ժանդարմ-ներն ու վոստիկանները յեռանգով աշխատում են, իր շատ ծանոթներին ու հարևաններին կես գիշերին տներից հանել ու չգիտեն՝ ուր են ուղարկել, իսկ դաշնակցական ֆիդայիներն ել մյուս կողմից են ահաբեկման յենթարկել Թիֆլիսի հայերին. «ազգասիրության» պատրիակի տակ «կամավոր» են տանում շատ անչափահաս պատանիների ու զանազան կոմիսիաների կողմից «անպետք» ճանաչված զինվորացուների: Իսկ ճանապարհների վրա, զնացքներին ու խճուղիներին հսկող դորքի մասերը վնչ վոքի չեն թողնում բանակից մեկնելու՝ առանց պատշաճ վկայականի:

Դրությունը անելանելի յեր. պետք եր հաշտվել պառափ բորենու հետ, ինու դանել, նրան մոտենալու համար՝ «հայր» անվանել նրան...

Մտորումների մեջ ել քննեց նա այդ գիշեր:

Սեպտեմբերյան ցուրտ ու քամոտ առավոտ եր. մաղվող բարակ անձրել քամու հետ միացած՝ սարսուռ եր ազգում նոր արթնացած ու գործի շաապող բանվորների վրա: Տիգոն կացինը գոտկումը խրած, ձեռները ցըտից՝ կոնատակերին, շտապում եր պառափ վարպետի մոտ, վոր քաղցր խոռք բացի նրա հետ:

Բայց զեր հազիվ եր Տիգոյի բերանից «բարի լուսը» դաւրս թնել, յերբ պառափ՝ փոխանակ պատասխանելու՝ ասաց. «Այսոր դու զնալու յես «իսաչափոր» գրութինը, նրանք մի մարդ են խնդրել մեղանից մեկ որով, կողնես, վաղը դարձյալ մեղ հետ կաշխատես»:

— Աչքիս վրա, — ասաց Տիգոն և քայլերն ուղղեց գեպի հարևան բլուրը, վորի հարթ գագաթին կանգնեցրած վրաններում ապրում եյին այդ «իսաչափուները»:

Թվով 15 հոգի եյին նրանք: Մի առանձին արտել կազմած՝ աշխատում եյին կոլեկտիվ հիմունքներով: Իշխանությունը նրանց առանձին արտօնություն եր տվել, բոլորն ել հասակավոր եյին, քառասուն և հինգ տարեկանից փոքր մարդ չկար մեջները: Ամեն մեկի շապկի տակ կախված եր մի մետաղյա խաչ կամ աստվածնի պատկեր: Նրանք իրենց ծառայությունը ցարի արևատության համար «աղնվությամբ» վերջացրել եյին, այժմ ել հանուն նրա հաղթանակի յեկել եյին թիկունքում աշխատելու, իսկ իրենց չափահաս աղաները փոխարինել եյին իրենց, հիմա հերթը նրանցն եր ցարին ծառայելու...

«Խաչափորների» գործն ել նույնն եր՝ ինչ վոր Տիգոյինը. — ծառեր կտրել տաշել հղկել դրա համար ել Տիգոն հօժարությամբ ընդունեց պառափ վարպետի առաջարկը:

Թեպետ Տիգոն շատ լավ եր ճանաչում այդ «խաչափոր» բիձաներին, գիտեր նրանց ով լինելը, բայց ձևացնում եր, վոր իբր թե ինքն ել նրանցից և և նրանցից ամեն մեկին «քեռի» կամ «պապիկ» եր անվանում: Սակայն այդ «քեռիներն» ու «պապիկները» այնքան ել հաշտ չեյին նայում թիկունքում աշխատող ջահել բանվորներին, վորոնց թվում և Տիգոյին: Նրանք շարունակ հայնոյում եյին այդ ջահելներին, վոր չեն գնում կովելու «հայրենիքի և ցարի համար», նրանք «գեղերատիրներ, գալաճաններ են, նրանց բոլորին պետք ե կախել»...

**

— Բարի լույս, քեսիներ ու պապիկներ, — ասաց Տիգոն ներս մտնելով վրաններից մեկը:

— Աստծու բարին, — լսվեցին ամեն կողմից, — հօր, քեզ ուղարկեցին այսոր ողնելու մեջ, շնտ լավ, — ասաց հասակով ամենից մեծը, վոր խոկույն վեր կացավ նստած տեղից, թեյի բաժակը զետեղից իր պայուսակում, կապեց խաչաձև ու դրեց իր անկողնի կողքին:

— Դեհ, Պետյա, գու այս յերիտասարդի հետ կգնաս այն փոքրիկ տափարակը, վորտեղ նշան դրված ծառերը յերեկ քեզ ցույց տվի, չորսն ել կլտրեք, կմաքրեք, մինչև ճաշը պետք ե վերջացնեք, — ասաց ծերունին, իր գիտաց կանգնած շեկ, յերկարավիզ ու յերկարամորում, զլխարկը մինչև աչքերը ծածկած, քիթը ցից Պետյային, ապա դիմելով մյուսներին շարունակեց.

— Դուք ել յերեկվա կիսատ թողածը պետք ե վերջացնեք այսոր, դեհ, մարշ:

Յեվ ամենքը դուքս յեկան վրանից ու ցրվեցին զանազան կողմեր. Պետյան ու Տիգոն ել զնում եյին ձորն ի վեր, դեպի Ալաշկերտի ճանապարհ: Մոտ կես ժամ քայլում եյին, յերկումն ել լուռ ու մտախոհ: Տիգոն խուսափում եր խոսքի բռնվելուց, դիտեր Պետյայի բնափորությունը՝ խկույն պիտի հայնոյանքը մեջտեղ բերեր, իսկ Պետյան ել առիթի յեր սպասում իրեն ատելի յերիտասարդ «զեղերտիրին» խայտառակելու:

Լոռությունը Պետյան խզեց, յերե հասան ձորի յերկայնությամբ հոսող առվի և Սև-զետակի միացման թերակղու վերեկ տափարակին, վորի վրա զտնվող չորս հաստ ու բարձր ծառերն սպասում եյին իրենց անկման:

— Ահա այստեղ եւ:

Տիգոն ուզեց հավանության խոսք ասել, բայց լսեց և բավականացավ միայն կացինը վայր դնելով ու գլխի թեթև շարժումով:

Լուս ու մունջ յերկումն ել գործի անցան: Մինչեւ Պետյան մի ծառ կտրեց, Տիգոն արդեն յերկուսի կատարը կուցրել եր, մնում եր մեկը՝ ամենից մեծն ու հաստը: Յերկումն ել հոգնել եյին, քրանել, զլխարկները վերցրին, վորոնց տակից ու շապիկների արանքներից գոլորշին բարձրանում եր ու խառնվում թեթև քամու և բարակ անձրմի հոսանքին: Նստեցին հանդուանալու: Պետյան պատմեց իր քաջապօրծությունների մասին ոռու-յապոնական պատերազմում, իսկ Տիգոն շարունակ լսում ու «կեցցե»-ներով քաջալերում եր Պետյային:

— Բայց, ասա խնդրեմ, — շարունակեց Պետյան — ինչու ձեր կովկասցիները խուսափում են պատերազմից, չե՞ վոր պատերազմը մղվում ե մեր ցարի կամքով հայրենիքի բարորության համար: Յես հիշում եմ յերբ հարձակման դիմեցինք Պորտ-Արտուրի մոտ զտնվող ամբողներից մեկի վրա, կովկասցիների մի վաշը առաջինը նահանջել սկսեց. հրամանատարն իսկույն հրաժայեց սրի քաշել այդ դավաճաններին և վաշը հետքը չժողովել. հենց տասնի չափ գլուխ իմ սուրբ թուցրեց, վորը մինչև այժմ ել կախված ե իմ ննջարանի պատից...

— Բայց, քենի Պետյա, չխղճացի՞ր նրանց յերիտասարդ կյանքին, — հարցրեց Տիգոն մեղմաձայն:

— Ի՞նչ խղճալ... նրանք խղճացի՞ն մեր ցարին ու նրա ընտանիքին, — զայրացած պատասխանեց Պետյան, յերեսը խաչակնքելով, ատամներն իրար սեղմե-

լով, — դուք բոլորդ ել այդպես եք, ախ տուզեմցիներ, դեղերտիրներ, հայրենիքի և գահի գավաճաններ. սիրում եք պատրաստ փրթածը լափել... յեթե յես մեր ինքնակալի տեղը լինելի, ձեզանից վոչ մեկին կինդանի չեյի թողնի. ինչացու յեք, յերբ այսպիսինեղ մոմենտներին չեք ոգնում ձեր թագավորին ու հայրենիքին...

Տիգոն տեսնելով Պետյայի գաղանացած դեմքը, խուսափեց շարունակել իր խոսքը. միայն զլսի շարժումով հավանություն տալուց հետո, հիշեցրեց, վոր դորդը մնում ե:

— Այն, այն, պետք ե աշխատել — համաձայնեց Պետյան, հանեց գրանից ծխախոտի տուփը, բաց արավ, յերեք մատով ծխախոտը լցրեց փոքրիկ թղթի կտորի մեջ, խնամքով փաթաթեց, ամրացրեց փոքրիկ ծխամորճի ծայրին, դրեց բերանը, վառեց և լիաթոք սկսեց ծխել:

Մինչ Պետյան իր ծխախոտով եր զբաղված՝ Տիգոն չորբորդ ծառի կեսից ավելին կտրել իր արդեն, վերջին հարվածներն եր տալիս և մի ձեռքով շարունակ հրում եր, վոր փոքր ինչ կոացնի ծառը: Պետյան քսան քայլի վրա կանգնած՝ հրամանատարի կեցվածքով դիտում եր իր վերջին որհամն առլող ծառի դագաթը, մերթ ընդ մերթ հրահանգելով՝ «մեկ ել, մեկ ել...»: Տիգոն հավաքեց իր ույժը, յերկու ձեռքով թափահարեց ծառը, վորը մի փոքր թեքվեց ու մնաց այդ դրությամբ. նա գարճյալ վերցրեց կացինն ու այնպես զարկեց, վոր մի ակնթարթում ծառը իր վիթխարի հսուակով գետնին տապալվեց, վորի ժամանակ ծայրի մի փոքրիկ ճյուղ դիպավ Պետյայի զլսին ու թեթևակի քերծեց նրա վերացման մասին...

— Դու ինձ սպանել ուզեցիր, անիրավ, լիբր, սատանայի ճուտ...

Տիգոն մնացել եր իր տեղը քարացած, չգիտեր ինչպես հավատացնի նրան, վոր սպանելու վոչ մի դիտավորություն չի ունեցել, այլ պատահմամբ ե փոքրիկ ճյուղը կպել քթին:

— Ախք քեռի Պետյա, ինչ ես ասում...

— Լոիր, տո անպիտան, շան ձագ, դեռ համարձակվում ես արդարանալ...

Մի ակնթարթում Պետյայի ձեռքին յերեաց շողշողացող մետաղ. լսեց յերկու իրար հաջորդող պայթյուն... Տիգոն պահ մի անշարժ մնաց, աչքերը մթնեցին, լեզուն կապ ընկավ... ասպա սթափվեց. նրա աչքերը փայլատակեցին, դեմքը խելագարի կերպարանք ստացավ, վազեց գեպի Պետյան, վորը ատրճանակը շպրտեց ու սկսեց փախչել... Տիգոն հասավ նրան, ձախ ձեռքով բնեց նրա գոտկատեղում շարժվող գոգնոցի կապերը, իսկ աջով բարձրացրեց կացինը և այնպես ուժգին իջեցրեց նրա զլսին, վոր Պետյան իսկույն գետին փովեց. յերկու մասի բաժանված գանգից ուղեղը գուրս ժայթքեց թաց գետնի վրա արյան հետ միասին. ձեռքերն ու վրտերը մերթ բարձրանում եին ողում. մերթ ամուր զարնվում գետնին...

Տիգոն նորից քարացավ. արձանացել շվարել եր... Ուզեց փախչել... Բայց աջ վոտքը չկարողացավ շարժել, վայր ընկավ: Նորից փորձեց կանգնել բայց այս անգամ զզաց վոտի վրա սուր ծակոց, վորը շուտով մոմուռի փոխվեց... Գուլպան ու կոշիկը այնպես եյին թրջվել վոր յերկըորդ անգամ փորձեց կանգնել ճպճպաց...

Տիգոն ժամանակ չկորցրեւ: Հանեց կոշիկն ու գուլպան: Վերքն այնքան ել վատանդավոր չեր, զնդակը ծակել եր վոտքի փափուկ մասն ու անցել: Արձակեց գոդոցը, ամուր կապեց վերքը, հագավ կոշիկը, մի ճյուղ կտրեց այդ չարաբաստիկ ծառից, մաքրեց, ձեռնափայտ շինեց, և, վերցնելով Պետյայի ատրճանակը, զրեց գրապանը... փայտին հենված մի կերպ իրեն հասցրեց խճուղին և հենց առաջին պատահած ֆուրդոնը նստելով՝ բռնեց Ալաշկերտի ուղղությունը:

* *

Ճաշի ժամանակ Պետյայի ընկերները յերկար սղասացին, բայց նա չեկավ: Հարցրին Տիգոյի մասին նրա վարպետից, բացասական պատասխան ստացան: Մի ժամից հետո Պետյայի դիմումը իր բարեկամ «խաչավորները» կառքով փոխադրեցին յեկեղեցի, վորտեղից յերկրորդ որը տարան, գերեզման դրին:

Սարիդամշի ամբողջ զորքը վոտքի կանգնեց: Ճակատի ամեն ուղղությամբ հեռազրներ, հրամաններ տվին, Տիգոյին ձերբակալելու: Ղարսի, Ալեքպովի, Թիֆլիսի, Յերևանի և Բագվի գաղտնի փոստիկանությունները, յերկաթուղային ժամանակներին յեռանդով փնտում եին Տիգոյին:

Մի շաբաթից հետո ցարական «արդարադատությունը»իբրև պատանդի բանտ ուղարկեց, Մարտյին, իսկ յերեխաններին հանձննեցին նրա մոտիկ բարեկամներին, վորոնք Մարտյից ավելի լավ վիճակում չեյին դանվում:

* *

Աշնան անձրևախառն քամին ալեկոծել եր Սարիդամիշից Ալաշկերտ տանող հարթ դաշտավայրը վորը

նմանում եր փոթորկվող ծովին, վորից ժայթքող փըրփրաղեղ ալիքները սարսափ ու սարսուր են ազդում նավով ճանապարհորդողների վրա:

Այդ քամուն և անձնեկի անձունի ու անդադար հարվածների տակ փուրգոնը սլանում եր ոձապտույտ խճուղիով, իսկ կառապանը շարունակ իր ձիյերի գովքն եր անում, մեկ-մեկ անունները տալիս, հիշում եր նրանց ցեղի մասին, առանձին հպարտությամբ պարծենում եր ալ-կարմիր քուռակով, վորը գնել եր չնչին գումարով նահանջի ժամանակ, խուճապի մատնված գաղթականներից:

— Լավ աղբանքը աչքի լսից ել սիրելի յե, — ասաց ձեռքի մտրակը ողում շարժելով, վորից ձիյերը ավելի արագացրին իրենց վաղքը:

Տիգոն ապուշ կտրած նայում եր կառապանին, մերթ ժպտում ու մերթ զլիսով հավանության նշան անում, բայց իսկապես նա վոչինչ չեր լսում, նույնիսկ նա իր վիրավոր վոտքի ցավը չեր զգում, շարունակ յետ եր նայում, յերկար տարածության վրա աշխատում եր վորոցել հեռվում յերևացող ճանապարհորդներին, արդյոք նրանք իրեն հետևող հետախույզներ չեն, իրեն ձերբակալելու չեն շտապում... Սակայն ձիավորներն իրենց ճանապարհը թեքում են մոտակա գյուղերի ուղղությամբ: Յեվ Տիգոն ըռպեապես փոխում ե, խոր հոգոց քաշում ու նորից նայում կառապանին:

Որն իր յերկրորդ մասն եր թեակոխում, շուտով մթան մղձավանջը պատելու յեր ամայի տարածության վրա: Կառապանը ձիյերի զլուխները թեքեց դեպի հոսող փոքրիկ գետակը: Պետք եր հանգստացնել ու ջուր տալ ձիյերին:

Տիգոն զդուշությամբ իջավ ֆուրգոնից, ձեռքի փայտին հենակելով մոտեցավ մեծ քարին, նստեց, հանեց ծխախոտը, հյուրասիրեց կառապանին, ինքն ել սկսեց լիաթոք ծխել կառապանն ել հանեց իր պայուսակից հաց ու ապուխտ և յերկուսով սկսեցին ճաշել:

Տիգոն լուռ եր, իսկ կառապանը դարձյալ իր ձիերի գովքն եր անում, պատմում իր մի տարվա ճանապարհորդության մասին, վոր Տիգոյին այնքան ել չեր հետաքրքրում:

— Հը՛, հայրենակից, ինչի՞ չես խոսում, ինչ յիս մտածում, վոտքի ցալը դատարկ բան և, սառածին շուտ են բժշկում, ծանր հիվանդ հո չես, վոր դժվար լավանաս,—աշխատում եր հանգստացնել կառապանը Տիգոյին:

— Այստեղ մոտիկ գյուղ չկմ, բարեկամ, վոր յես մի քանի որ հանգստանամ,—հարցրեց Տիգոն:

— Գյուղ, վորքան կուգես... այ, հենց այս բլրի յետե մի քրդի գյուղ կա:

Տիգոն ուրախացավ, նրա աչքերը փայլեցին: Տասը ըոսկեից հետո նրանց ֆուրգոնը շարժվեց, մի քանի պտույտներ գործելով բլրի շուրջը՝ կանգ առավ ավերակների կույտի մոտ:

Գետնափոր խցերից մի քանի տղամարդիկ՝ ֆուրգոնի ձայնից ու ձիյերի զանգերի զողանշյունից ահաբեկված՝ գուրս վազեցին, խոր գլուխ տվին հյուրերին ու հարցրին նրանց «համեցեք անելու» պատճառը:

Քանի վոր հազվադեպ յերևույթ եր ֆուրգոնի յերեալը իրենց գյուղում, նրանց գեմքերը վախի կերպարանք եյին ընդունել թեպիտ նրանք աշխատում եյին այդ թագցնել, այնուամենայնիվ փորձված կա-

ռապանը իսկույն նկատեց, հանգստացը նրանց և հասկացրեց, վոր իրեն ուղեկիցը հիվանդ ե, քիչ ժամանակով ուզում և լջնել նրանց գյուղում:

Թրղերից մեկը լավ հայերեն եր խոսում, ուրախությամբ ընդունեց առաջարկը: Տիգոն շնորհակալություն հայտնեց կառապանին, վարձատրեց նրան, գնաբարով ասաց ու գնաց իրեն շրջապատող քրդերի հետ դեպի Զինդիի բնակարանը:

**

Զինդին մի յերիտասարսդ, թխադեմ, առողջակազմ տղամարդ եր, ապրում եր իր մոր և փոքր յեղբոր հետ միասին, գետնափոր անակում: Պատերազմի դառնությունները նա ել եր ճաշակել. մի տարի առաջ առաջին գաղթի ժամանակ նա կորցրել եր իր սիրած 11 տարեկան. Զարե քրոջը, վորին յերկար վորոններուց հետո համոզվել եր, վոր կամ սովաման և յեղեւ կամ գաղանների կեր զառել և կամ «գյավուրները» սպանել են... իսկ իր հայրական տունը, վոր Բասենի վիայեթունն եր գտնվում, դարձել եր մօխրակույտ: Նա, ինչպես և իր հարեւանները, պատսպարվել եյին Ալաշկերտի հովտի այդ յետ ընկած գյուղում, վորպեսզի հեռու լինեն, ցարական զորքի և դաշնակցական ֆիդայինների աչքից, վորոնք ատելությամբ լցված վրեժինդիր վիճելու համար կարող եյին ամեն ըոսկ սպանել կամ իբրև ռգերին տանել ձրի աշխատեցնել տանջել ու սովաման անել... Ահա թե ինչու Զինդին ու իր հարեւանները ահաբեկվել եյին ֆուրգոնի յերեալուց, նրանք այդ բանը «վատ նշան» եյին համարում:

Մի քանի որ Զինդին վախենում եր Տիգոյից, թե-
պետ վերջինս վնչ մի «սպառնալիք» չեր ցուցազրում,
ընդհակառակը, շատ պարզ ու խեղճ եր պահում իրեն,
այնուամենայնիվ Զինդին չեր հավատում նրան, նույ
նիսկ գիշերները չեր քնում, անկողնում պառկած, վեր-
մակի տակից հատ աչքով հսկում եր Տիգոյին «Հինդի
թե գյավուրը կես գիշերին յեխի մորթի իրենց, գյա-
վուրները բափա չունեն, ղոնաղ ու տանտեր չեն
ջոկիլ»... մտածում եր Զինդին ու նորից «խոմիտ-
ցնում», իրեն քնած ձևացնելով:

Պակաս յերկյուղի մնջ չեր նաև Տիգոն: Թեպետ
նա յերեք քրտերի հետ չեր ապրել բայց Սարիղամի-
շում լսել եր քրտերի առասպեկտության հասնող «գաղա-
նությունների» մասին, վոր նրանք «հայ» բառը զըզ-
վանքով են արտասանում, ձեռքն ընկած հային «գըլ-
խից մինչև վոտքերի պճեղները մաշկում» և այլն, և
այլն. Յեկ մի քանի գիշեր նա ել իր հերթին «աղիե-
սաքուն» եր լինում, Պետյայի ատրճանակը ձեռքին,
անկողնում, վերմակի տակից սպառնում եր Զինդին
«հարձակման»...

Սակայն այս կոշմարային գիշերները շուտով անց-
նում են. Տիգոն ու Զինդին միմյանց մեջ տեսնում են
անվտանգ մարդկանց, բացում են իրենց. սրտերը, հե-
տզենտե մտերմանում ու դառնում անբաժան ընկերներ:

Տիգոն Զինդիին սովորեցնում եր հայկական տա-
ռերը, վերջինս կարճ ժամանակում սովորում է կար-
դաս ապա և զրել: Նա հետզենտե փոխվում է, Տիգոյի
զրույցները պատերազմի խակական պատճառների, տի-
րող կարդերի, զյուղացիների ու բանվորների մասին—
մեխվում են Զինդիի ուղեղում, նա այլև նողկանքով

եր հեշում իրենց զեկավարներին, վորոնք զբարում եյլն
կոտորել հայերին: Զինդին գանգատվում եր իրենց
գյուղի շեյխից, վորը յերկար տարիների ընթացքում
տղուկի նման ծծել ու ծծում եր իր և իր նմանների
արյունը, հարգեր դնում նրանց վրա, ստիպում եր
իրեն համար փայտ կտրել, հողերը վարել, վոչխարները
հանդը տանել և այլն, և այլն:

* *

Տիգոն Զինդիի տանը յերկար չմնաց:

Յերկու ամիսը շուտով կլրանար, ինչ նա բաժան-
վեց իր բարի կառապանից: Այդ ժամանակամիջոցում
նա առողջացել, կաղդուրվել եր, այլևս չեր կաղում:
«Պետք ե գուրս գալ այս վորջից, գործ փնտոել, նա-
մակ գրել Բարսեղին, տնից մի խարար լսել, վերջա-
պես տեսնել՝ թե ինչ ե կատարվում աշխարհում»...
մտածում եր նա:

Զինդին շարունակ գանգատվում եր, վոր սուս-
ներն իր հայրենի գյուղը ավերել ու վերան են դար-
ձրել իր ունեցած մետաղե ամաններն ու մօր տարի-
ներով հավաքած մի քանի վոսկի լիրաները մնացել
եյին ավերակների տակ իսկ իրենք ազքատ ու տնանկ՝
կարեքի մեջ են: Մի քանի անգամ վճռել եր գնալ,
տեսնել իրենց ավերակ գյուղը, բայց... հանկարծ հի-
շել եր, վոր ինքը քյուրդ ե, հանդիպած հայի կամ
ոսի կողմից իրեն լավ բան չեր սպասում... «գյավուր-
ները կմորթեն»... ու հրաժարվում եր այդ մտքից...

Բայց այս անգամ հույսը դրել եր Տիգոյի վրա.
Նա հայ և և լավ սուսերն խոսել ե իմանում, նրա
հետ կարելի յե ապահով գնալ:

Մի մառախլապատ առավոտ Տիգոն ու Զինդին
մեկ-մեկ փայտ ձեռքներին, ցնցոտիների մեջ փաթաթ-
փած քայլում եյին դեպի Ալաշկերտը Բասինից բաժա-
նող բարձր լեռները, վորը միակ կարճ ճանապարհն եր:

Մութն ընկել եր արդեն, նրանք դարձյալ քայլում
եին: Զինդին իր հինգ մատների նման գիտեր այդ
ճանապարհը, անտեսանելի խովարը նրանց չեր կարող
խանդարել: Բայց շուտով սև ամպերի տակից, կամաց-
կամաց ծկակի տվեց լուսնի շողը, հետզհետե տարա-
ծեց իր լույսը ամայի անապատում, մեր ճամբորդները
տեսնում եյին վազող ամպերը, մոտակա լեռան գա-
զաթին փայլող աղոտ լույսը, վոր ամենայն հավանա-
կանությամբ տրանսպորտի կայտն պիտի լիներ...

Թանի դնում, այնքան հոգնում եյին, նրանց
ծնկները հետղինետե թուլանում եյին, իսկ աչքերն ար-
դեն մանրացել կուչ յեկել, փակվում եյին: Կես գիշերը
վաղուց եր անցել, յերբ նրանք հասան Զինդին ծա-
նոթ թթու աղբյուրին, վորից քիչ հեռու, մի նեղ փոսի
մեջ կծկվեցին ու քաղցր մոռափեցին:

Լույսը բացվելու հետ բացվեցին և Տիգոյի ու
Զինդիի աչքերը: Կվացվեցին ու նորից շարունակեցին
իրենց ճանապարհը: Կեսորից առաջ հասան ե. գյուղը:
Զինդին արագացրեց քայլերը, դիմեց գեպի կենտրոնը,
ուր գտնվում եր իրենց քարաշեն տունը, բայց... ի
զուր, Զինդիի տան ալեքսակների վրա զորքի վրաններն
եյին անկել, անկարելի յեր պեղումներ կատարել: Զին-
դիի հույսը կտրվեց, վերջնականապես զբկեց պղնձե
ամաններից ու իր մոր վոսկի լիբաներից... Մոլորված
կանգնել եր յերկար ու չեր ուղում հաշտվել իրակա-
նության հետ:

Այդ միջոցին Տիգոն զննում եր իր շուրջը, կար-
գում վրանների ճակատին փակցրած փոքրիկ ցուցա-
նակները, վորոնց վրա զրված եյին այդտեղ բնակվող
զորամասերի տնունները: Հանկարծ նրա աչքն ընկավ
մի փոքրիկ սցունի վրա ամբացրած թիթեղյա ցուցա-
նակ, վորի վրա զրված եր՝ «Կոյն քայլութեա» և տա-
բելիցի, սուրած ամայի անապատում, մեր ճամբորդները
տեսնում եյին վազող ամպերը, մոտակա լեռան գա-
զաթին փայլող աղոտ լույսը, վոր ամենայն հավանա-
կանությամբ տրանսպորտի կայտն պիտի լիներ:

Ճանապարհին նրանք պատահեցին մի խումբ
բանվորների, վորոնք խճուղու ցեխն եյին մաքրում:
Տիգոն հարց ու փորձ արեց, նրանցից ամենահասա-
կավորը պատասխանեց.

— Ախպորս ասեմ, մենք զազախեցիք ենք, վերեր
շատ խալի են բանում, շորագալցիք ել կան, յերկան-
ցիք ել, զարարաղցիք ել վրացիք եր ուղաներ ել. դիփ
ել փողբաշոց ձևոի տակ են, մենակ զեսետնիկներն
ու տարելչիկներն են կազոննի, կանտոնն ել՝ հրե հա,
են գեղի միջին ա...

Տիգոն շնորհակալություն հայտնեց: Կես ժամ
չանցած, նրանք կանգ առան գյուղի մուտքի ծայրին
բարձրացող մի մեծ թմբի առաջ, վորի զլամին ցցված
եր փայտե խաչ:

— Զինդի, այս յերկի կոտորված զորքի «յեղայ-
րական» գերեզմանն ե:

— Զե, Տիգո ջան, սա ասկերների գերեզման չե,
այս գերեզմանի պատմությունը յես շատ լավ գիտեմ:
Յերբ ոսները մտան մեր յերկիրը, նրանք ու հայ

Քիդայիները կոտորեցին մեր քյուրդ ու թուրք խաղաղ բնակիչներին, ով վոր կարողացավ՝ ինձ պես փախավ, յետ ընկած տեղ թագնվեց, իսկ ծերերին ու յերեխաներին սրախողխող արին: Իսկ յերբ ուները նահանջեցին՝ տաճկական ասկերներն ու քյուրդ աշխաթները նույնպես վարվեցին հայերի վերաբերմամբ: Այս թմբի տակ մոտ 70-ի չափ ծերեր ու յերեխաներ են թաղված...

Տիգոն այլևս չեր ուզում լսել, բավական եր...

Ծերերի ու յերեխաների անմեղ դիակների վրա բարձրացող այդ հողաթումը մի սարսուռ ազդող հուշարձան եր, վոր ամեն գյուղ մտնողի պատմում եր ցարական վամպիրների, սուլթանական վազրերի, դաշնակ բորենիների «մարդասիրության» մասին... Տիգոյի համար ամեն ինչ պարզ եր:

Առաջ անցան: Յերբեմնի հարուստուշեն կ. գյուղը իրենից ներկայացնում եր ավերակների ու փլատակների մի կույտ, թնդանոթների լեզուները մի հատիկ կանգուն պատ չելին թողել, ամեն ինչ տակն ու վրա ելին արել... Անմշաս եր մնացել միմիայն այդ գյուղի գերեզմանատունը, վորի մի քանի տասնյակ ցից գերեզմանաքարերը հարավ - արևելյան բլրի կրծքից իշխում ելին գյուղի ավերակների վրա:

Համարյա նույն վիճակումն ելին գտնվում Բասենի շըջանի բոլոր գյուղերը: Ամայացել ու լրվել ելին, ջնջվել ելին յերկրի յերեսից... Յեթե դաշնակները յերազում ելին «միացյալ, անկախ, ծովից - ծով մեծ Հայաստանի մասին» առանց թուրքերի ու քըրդերի», ապա ոռւսական ու տաճկական իմպերիալիստները ծրագրել ելին ունենալ «Հայաստանն» առանց հայերի»...

Յերկու կողմերի ցանկությունը կատարվել եր. վայ հայ եր մնացել և վայ թուրք ու քյուրդ...

Այդ գյուղի ավերակների վրա բարձրացել ելին յերկու մեծ տախտակամած շենքեր, վորոնցից մեկում տեղավորված եր հաշվապահությունն ու գրասենյակը, մյուսում ճանապարհի պետի առանձնասենյակն ու ծառայողների կացարանները:

Ճանապարհի պետը, մի շիկահեր, առողջակազմ յերիտասարդ եր զինվորականի հագուստով, նրա ուսագիրները վկայում ելին, վոր նա ճարտարապետ ե, գնդապետի աստիճանով, Տիգոյին ընդունեց իբրև տաբելջիկ, իսկ Զինդիին խոհարարի ողնական:

Այդ որվանից Տիգոն դարձավ «Մարտիրոս», իսկ Զինդին՝ «Յեփրեմ»:

Յերկըրդ որն ևեթ նրանց գործի դրին: Տիգոյին ուղարկեցին խճուղու վրա աշխատող բանվորները քանակն ու նրանց ամենորյա աշխատանքները գրելու, իսկ Զինդիին հանձնեցին խոհարարին, վորի ամեն մի հրամանը իսկությամբ կատարում եր և խոհարարը Զինդիից գոհ եր:

**

Մարոյին յերկար չպահեցին բանտում: Մի ամսվա բանտարկությունն ել բավական եր, վոր նրա առանց այն ել նիհար որդանիզմը հյուծվեր ու քայքայվեր: Յարական ժանդարմներն ու չինովակները կաշվից դուրս ելին գալիս տեղեկություն լսելու նրա կաշվից դուրս ելին գալիս տեղեկություն լսելու նրա ամուսնու մասին, սպառնալիքները, իսկատ մեկուսացումը, մահվան պատժի ուրվականը, վորով վախեցնում ելին Մարոյին, անկարող յեղան կոտրել նրա ամուր

կամքը... նա շալունակ կրկնում եր՝ «Յես վոչինչ չզիտեմ, յես հիվանդ եմ, ինձ սպանեցէք, վոր ազատվեմ ձեր յերեսից»...

Մի ամսից հետո Մարոյին արձակեցին բանտից, բայց գաղտնի վոստիկանությունը հատուկ հսկողություն եր նշանակել նըս վրա:

Իր ազգականների ոգնությամբ Մարոն կամաց-կամաց սկսեց կազդուրվել, յերեխաների հոգսը քաշել Մարոյի բանտարկությունը անդրադարձել եր չարաճճի Ստեփանիկի ու հեղ Քնարիկի վրա, հարկավոր եր լուրջ հետևողություն նրանց առողջությունը վերականգնելու համար:

Մյուս կողմից ել Մարոն իր արժանապատվությունից ցած եր համարում ավելորդ բեռը դառնալ իր՝ առանց այն ել չքափոր ազգականների վրա: Յեվ սկսեց գործ փնտուել... Յերբ ամեն կողմից մերժում ստացավ իր հարևանների լվացքը սկսեց լվանալ: Շարաթական մի քանի ոռութի վաստակելով՝ յերեխաների հացն ու տաք թեյն անպակաս եր անում: Նա իր խոսքի տերն եր: Տիգոյին այդպես եր խոստացել և կատարեց իր խոստումը:

Յերկու ամիս եր անցել. Տիգոյից վոչնամակ կար և վոչ ել լուր ուներ, զիշեր-ցերեկ հանգիստ ու դադար չուներ: «Յերկի սպանել են... Յեթե բռնտծ լինելին՝ Բարսեղը կդրեր... Գուցե անտառում սովամահ և յեղել կամ ցրաից սառել»... մտածում եր Մարոն, արտասկում ու հեկեկում:

Հենց վոր Տիգոն գործի կանգնեց՝ կ. գյուղից նամակ գրեց Բարսեղին: Բարսեղը քիչ հետո յերկու շա-

բաթով արձակուրդ ստացավ մեկնեց Թիֆլիս: Հենց վոր Մարոն լսեց Բարսեղի գալու մասին, իսկույն վաղեց նրանց տուն: Դեռ չբարեած, հեալով հարցրեց.

— Բա մեր ե Տիգոս...

Ընկալ աթոռի վրա և դառնացած սկսեց լալ:

— Արիսեյին կաց, հարսի ջան, դինջացի, լաց մի ըմի, սաղ սալամաթ ա... այ, ես գիրը կարդա, — հանեց գրպանից Տիգոյի նամակն ու մեկնեց Մարոյին:

Մարոյի աչքերը փայլեցին, դողալով վերցրեց նամակը, աչքերը սրբեց ու սկսեց ագահությամբ կարգալ:

Իսկապես Տիգոյի ձեռագիրն եր, նա խնդրում եր Բարսեղին, վոր Մարոյին մի կերպ իմաց անի իր վող ու առողջ լինելու մասին: իսկ «Մարտիրոս» ստորագրությունից ել Մարոն հասկացավ ամեն ինչ:

Նամակում հասցեյից առաջ գրված եր՝ «Մարտիրոսի գործը այսուհետեւ լավ կլինի, շուտով փող կուղարկի»:

Մարոյի ուրախությանը չափ չկար: Ուրեմն Տիգոն կենդանի յե, գործի յե մտեր, ամեն ինչ անցել եւ Ապա Բարսեղից լսեց մանրամասն Տիգոյի հետ պատահած դեպքի մասին:

Այդ որվանից վերսկսվեց Մարոյի և Տիգոյի նամակագրությունը: Տիգոն գրում եր Բարսեղի հասցեով, վոր հանձնում եր Մարոյին: Շուտով Տիգոյից փող ել ստացվեց:

Մարոն թեթև կանանցից չեր. նա գաղտնի վոստիկանության ուշադրությունը չսրելու և նրան առիթներից զրկելու համար՝ շարունակում եր իր լվացարարությունն ու յերեխաների արտաքին դրությունը վոչնչով չեր բարելավում:

Թեպետ ուտել-խմելը կանոնավոր եր, բայց նրանք դարձյալ շարունակում եյին մասը նույն ցնցոտիների և լաթերի մեջ:

* *

Տիգոն և կամաց - կամաց իր կյանքի պայմանները լավացրեց, տաք հագուստ ձեռք բերեց, Զինդին լավ կերակուրներ եր հրամցնում նրան ու հետզհետե կազուրվեց: Ամեն առավոտ հեծնում եր իր դանդաղաքայլ ձին, ոգի մի ծայրից սկսում եր բանվորների ստուգումը, մինչև հասնում եր մյուս ծայրն՝ արդեն կեսոր եր դառնում, ապա վերադարձին վերստուգում, համարում և մինչև հասնում եր խճուղու սկիզբ՝ արդեն մութն ընկնում եր:

Նա իր ամենորյա այդ միապաղաղ ճանապարհորդության միջոցին հանդիպում եր ճակատից թիկունք վերադառն հաղարավոր վիրավոր, սառած, հիվանդ, կմախքացած կիսամեռ մարդկանց, վորոնք զրկված մարդկային կերպարանքից, այլևս անպիտք եյին կյանքի համար: Իսկ նրանց փոխարինելու, ավելի շուտ նրանց ճակատդրին յենթարկելու համար թիկունքից դեպի ճակատ եյին քշում հաղարավոր թարմ, առողջ, կյանքի ծարավ յերիտասարդ տղամարդկանց...

Շատ հաճախ Տիգոն ականատես եր լինում, թե ինչպես զինվորները սպաների առաջնորդությամբ հարյուրավոր կանանց, յերեխաներին ու ծերերին դյուզերեց հավաքում, տանում եյին իբրև «պատերազմական գերիներ», ճանապարհին հայոցում, թքում ու ծեծում եյին իբրև «անհավատ յերկշուների»...

Տարիներով Տիգոյի սրտում կուտակված մաղձը ել ավելի յեր դասնանում այդ տեսարանների վրա և վրեժինդը թյան տեսչը հասունանում:

Գիշերները Զինդիի հետ նստած պատմում եր նրան իր տեսածները, Զինդին ել պատմում եր Տիգոյին այն ցոփ կյանքի մասին, վոր անց եյին կացնում իրենց պետն ու նրան շրջապատող չինովիկները:

— Եսոր ճաշի ժամանակ մի դյուզալ խանում եր յեկել Ու.-ի մոտ, յերբ յես ներս մտա, քիչ մնաց ձեռքիս ամանները թափեցի... նրանք յերկուսով կարմրեցին, իսկ յես ամաչցի ու ներողություն խնդրեցի... Հիմա ել խանումը նրա մոտ ե... Գնացի փողը աչի Զ-ից յերկու շիշ կոնյակ բերի դրանց համար... Քիչ հետո գնացի Ե.-ից թղթեն մեծ տուփով շողուաթ բերի... Հարա են անգյուման սկլադի մեծը, իմ տարած յերեք տեսակ կերակուրով չի կշտանա, կհրամայի ձուկ ել տապակել... են սարքետարը, ամման, առավոտ-իրիկուն հարբած ե, ձին կհեծնի կերթա Ն. գյուղի Վ-շպիտալը, քածերի հետ պար կխաղա, յերկրորդ առավոտը կվերադառնա...

Այսպես, Տիգոն զծի անցուդարձն եր դիտում, իսկ Զինդին չինովիկների այլանդակությունները:

* *

Կիրակի որերը Տիգոն ու Զինդին պարապ չեյին նստում կ, դյուզում: Մինչ արիստոկրատ ռպապաշաների թոռնիկները սեղանի շուրջը նստած թղթախաների թոռնիկները սեղանի շուրջը նստած թղթախաների եյին զբաղվում, կամ «գթության քույրերի» հետ ժամանակ անցկացնում, Տիգոն ու Զինդին զնում եյին բանվորների վրաններն ու մտերմական զրույցներ

անում, վոր սկսվում եր առողյա խոսակցություններով և վերջանում քաղաքական բնույթ կրող լուրջ հարցերով; Նրանք այնքան եյին վոգենորդում, վոր վրանների գլխի ծակուտներից անընդհատ հոսող հաշող ձյունի ջրերից ու հատակի ճպճպացող ցեխից առաջացած մարմնի զողոցն ու վոտքերի մրմրոցը անկարող եյին լինում դուրս բերել նրանց վրաններից:

— Մարտիրոս ախտեր, — գանգատվում եր Տիգոյին բանվորներից մեկը, բերանի զողորշիով տաքացնելով իր բոերը, — բա ես մեր ապրուստը՝ տալրուստ ա, մեզ հմա վոչ ցամաք շոր կա, վոչ տաք բաժին, վոչ քուն ու դնջութին... ավելի բախտավոր չեյինք ըլի՛, վոր կոփկ գնայինք, յա մի անգամ կմեռնեյինք, յա թե չե՞ պլեն (գերի) կընկնեյինք...

— Զհանգամը ես տանջանքը, — մեջ ընկավ մի ուրիշը, — յանի մեր հախն ել ա թամամ տային, սըրտներիս դարդ չեր ըլի՛... են մեր փողբաշին, վոր եկավ մեր գեղը, սհենց պայման դրեց — ասավ՝ «սալդաթութենից ազատվում եք, ճամփեն մուֆթա, հացը, յեղը, շաքարը կազոնի գնով ա, լավ ոթախներ կտան, նավթը, փետը՝ կազոնի, որենն ել յիրեք մանեթորվա մուզդ» (որավարձ)... Յեկանք եստեղ՝ յիրեք մանեթը շինեց մեկ ու կես, հացն ու շաքարը՝ վոնց ուզըմա — հաշվումա, յեղի երես հոսկի ելատեսիլ չենք... դե, ոթախը, նավթն ու փետն ել... տեսնում ես ելի...

— Ես սալդաթութին չի՛, բա ինչ զահրմար ա, վոր սալդաթն ա մեղնից վաթար որումը, — ավելացրեց անկյունում նստած պատանին, — ես, հլա մենք խարվեցինք, ասենք, ջնանդամը, սալդաթութենից ելա կաշատինք, եկանք, բա են վրա ութ պալատկումը չիմ

ել պառավ բիձեքը խի՞ եկան, վախեցին իրանց նոր սալդաթ տանեն...

— Ե՞ս, քու տունը շինվի, բա վոր նրանք տանը հաց ունեցել եյին՝ կը գեյին, — շտապեց ուղղել ավելի փորձված յերկտարարը, — ամեն մինը մի փարա քուլփաթի տեր են, նող չունեն, տալվար չունեն, որական յիրեք մանեթը քիչ փող ա, դե, խաբվել են խեղճերը, վիճակ անեն... Տեսար վիճ, վոր անցկացած շաբթին ուղեյին փախչել, համա ուր կը փախչեն ոսի ձեռիցը... նհենց քյոթակ կերան խեղճ ալիվորները, վոր ըսոր ել իրանց պապի ողորմին են ասում...

— Ես դիմ լավ, համա, Մարտիրոս ջան, խոսքը մեր մեջը մնա, մի ինձ ասա, ես թախտը քանդված մեր թաքավորի որենքումը զակոն չկմ, վոր մարդ ինչ վոր աշխատի ինքը ստանա, իրա քրտինքը ինքը ուղի... տոն, փողբաշիս վիճն ա, սկի փողբաշին գիզմ թե մենք ինչ ենք շինում, կազոնի դեսնտնին ու տեսնիկը գալիս, ինչ վոր հրամայում են՝ են ել շինում ենք, ամիսը մի անգամ ա են տնաքանդն երեսում, են ել մեր ամենքիս յիրեք մանեթի կիսելը ինքը տանում... ել մեր ամենքիս յիրեք մանեթի կիսելը ինքը տանում... Յես աշխատեմ՝ նա տանի, յես ես ցրտին կոնգորնաթե սալդաթեմ՝ նա տանի, յես ես ցրտին կոնգորնաթե լով որերս խավարացնեմ՝ նա քեֆեր անի՞. բա սրա վերջը չստի ըլի՛, — տաքացած հարցը օմի խոշոր աչքերի միջահասակ բանվոր, ձեռքերը ողում թափահարելով:

— Այս հենց ցավս ել գրանումն ե, տղերը ջան, — վոգենորված սկսեց Տիգոն, տեսնելով վերջին ճառախոսի ավելի ուեալ մոտեցումը, — վոր թագավորի զակոնումը եղ բանը չկա, հենց ինքը թագավորն ել մեր հաշվին ա աղբում, նա հիմար ա, վոր ենպես զակոն բաց թողնա, վոր ով աշխատի նա ուտի...

— Հենց ձեր գեղումը, քյոխվեն կամ ստրաժնիկը թա-
գավորի գերեր չեն կատարում, ձեր շնոքին չեն նոտած,
ձեր քրտնքով չեն ապրում, հալա անմեղ տեղն ել չեն
ծեծում, բռնհում... Հենց այ, մեր կում նոտած չինով-
նիկները, ովքեր են նրանք, բոլորն ել հարուստների
վորդիք են. ամբողջ որը յերկու գրոշի գործ չեն շինում,
զլուխները կովից աղատելու համար յեկել են տաք-
տաք նստել են, վհչ վոք նրանցից վոչինչ չի հասկա-
նում... նրանք մեր վղին չեն, մեր քրտինքը չեն ու-
տում... Ես պատերազմը մեր զլխին չի, մեր ախաղրտինքը
չեն կոտորվում, մի հատ չինովնիկի կամ հարուստի
վորդի կտանեք կովի գնացած... Կամ թե չե ես ահա-
գին փողերը վոր ծախսվում են մարդկանց մորթելու
համար մեր ջանիցը չեն հանհում... Մինչեւ հիմա դեռ
մենք խելքի չենք յեկել սպասեք, պատերազմից հետո,
տեսեք ինչ սոսկալի գրություն պիտի ստեղծի թագա-
վորը... Ես ձեր փողբաշխին ել նրա ճուտն ա, քանի
դանակը ձեռին ա, մաշկում ա... Համա գուք միշտ պի-
տի արթուն կենաք, պատրաստվեք, վոր եղ դանակը
դրա ձեռքից խլեք ու իրա փորը կոխեք... Բա մեծ-մեծ
քաղաքներում վոր գործադուլներ են լինում՝ զրա հա-
մար չի, քաղաքի ամեն մի գործարանատեր ձեր փող-
բաշու պես բանվորներին քամում ա, բանվորի աշխա-
տանքի արժեքի սկի չորրորդ մասն ել չի տալի... Եղ
գործարանատերերին ել թագավորը չի պաշտպանում.
Հենց վոր գործադուլ ել լինում՝ թագավորի ժանդարմ-
ներն ու զորքը չեն բռնհում - բանադարկում գործադուլ
անող բանվորներին կամ զնդակահարում նրանց... Մեծ
քաղաքների բանվորները եղ բանի դեմ վաղուց են
կովում, մեկ ե, վերջը հաղթելու են, մենք պետքե

գնանք նրանց ճանապարհով, ձեզանից ամեն մեկը
պետք ե լավ պատրաստվի եղ որվա համար...

Կիրակի որերի այս խոսակցություններն այնքան
յերկար եյին տևում, վոր Ֆիլոն ու Զինդին ուշ գիշե-
րով եյին վեցադառնում տուն։ Ֆիլոն գնում եր տախ-
տակամածի մի անկյունում դրված իր թախտի վրա
պառկում, իսկ Զինդին բարձրանում եր խոհանոցի դա-
րակի վրա, «լո-լո» մըրմռում ու աչքերը փակում։

* *

Անցան ձմեռվա գածան ցրտերը, Գարնան գու-
րեկան արեւը կամաց-կամաց ջերմացրեց մարդկանց
սառած վոսկորները։ Բասենի դաշտերը գուգվեցին
մախմուր կանաչով։ Գույնզգույն ծաղիկները կանաչին
խառնվելով՝ հմայում եյին իրենց տեսքով ու բուր-
մումքով։

Յել թիակը ձեռքին շորագյալցին նայում եր այդ
հրապուրիչ զլլան տափաստանին ու ինքն իրեն մըտ-
մուռվում։

— Մեր դաշտերն ել կանաչած են, Մկոն ենոնց
համար մեռած ե, վոչ վար անող կա, վոչ ցանող, ման-
չերուս ես տարի կը տանի հող, Քյոփակ Փիլոսը կցանի
բոլ-բոլ, չունեռին կծախի մեկը հազարով... Ա՛խ, սա-
բար, տունդ չհասնես բարով-խերով։

Դազախեցին քլունգին կրթնած՝ պիլ ձայնով կան-
չում եր թուրքերէն։

— Ազգը մազա կաննըմ,

Մեյ կաննըմ, մազա կաննըմ,

Ելամասն զարիբ յերա դուշմ ոլըմ,

Դազախ դարալարդան գյազա կաննըմ։

Իսկ զարաբաղցին յետ չեր մնում, նա ել իր սրինդը գրպանից հանում, մեկ-մեկ կլկացնում ու յերգով գովքն եր անում իր գյուղի, իր տան, ժայռերի քերծերին արածող այծերի, իր փոքրիկ բայց պաղատուայգու խաղողի ու թղի...

Փարունը Տիգոյի համար նոր կյանքի դուռը բացեց: Զինդին դարձել եր նրա համար մի չարփաղար. գավառում գյուղ չեր մնացել, վոր այցելած չլիներ Տիգոն՝ Զինդիի առաջնորդությամբ:

Ի հարկե գյուղերում սովորաբար մարդիկ են ապրում, գյուղատնտեսությամբ պարագում, այլիներ, մարագներ, խոտի գեղեց են լինում, մեծ ու փոքր յեղջյուրավոր անասուններ բառաչում կամ մկնում, հավեր, ու հավքեր քուջուջ անում, շներ են հաջում... Բայց նրանց այցելած գյուղերում այս բոլորի փոխարեն նրանք տեսնում եյին... քարակույտեր, հողակույտեր, կիսով չափ ավելած շենքեր, գիշատիչ ագռավներ, ամբողջ ձմեռ ձյունը ու ցեխի տակ մնացած, ապա զաղաների լափից այլանդակված ու ծվատված դիակների մնացորդներ...

Նման տեսարանների հետ Տիգոն ու Զինդին վազուց եյին հաշտվել, ել չեյին սոսկում, ել չեյին մըղկառմ... Պատերազմի «որենքն» եր այդ:

Այդ գարնանից Տիգոն մի քանի որինակ թերթեր գուրս գրեց քաղաքից. նա կանոնավոր ստանում ու կարդում եր, ապա տանում տալիս խճուղու բանվորներին, վորոնց մեջ յեղող մի քանի գրագետներ կարդում եյին, մյուսները լսում:

Թերթերից մեկի մեջ մի որ խոշոր տառերով տպված եր Պետրոգրադում տեղի ունեցած մի քանի

գործարանների գործադուլների մասին, վորով բանվորները պահանջում եյին վերջ տալ պատերազմին, իշխանությունը հանձնել բանվորներին...

Սյդ լուրս կայծակի արագությամբ հասավ գծի պետի ականջը, վոր և հրամայեց այդ թերթի որինակները հանձնել իրեն, հակառակ գեպքում սպառնում եր՝ «ում մոտ գտնեմ» խկույն դաշտային դատարանին կը հանձնեմ»...

Պետի հրամանը Տիգոյին չսարսափեցրեց, վորով հետև այդ համարներն արգեն բանվորների մեջ կարգացվել եյին և պահված եյին նրանց խոնավ վրանների անկյուններում թափված պայուսակներում:

Այնուհետև Տիգոն սկսեց ավելի բացվել: Յեթե նրա զրույցները մինչև հիմա լինում եյին միմիայն կիրակի որերով, այժմ նրա ամենորյա զբաղմունքը դարձան. նա փոխանակ բանվորներին համարելու, ստուգելու, ազգանուններով կանչելու, — խմբակներով հավաքում եր իր շուրջը, թարմ տեղեկություններ հաղորդում, վոգեսրում, պատրաստում գալիք գեպքերի համար:

* *

Որերը հետզհետե տաքանսւմ եյին, արկի ջերմությունը սաստկանում ու դառնում եր անդուրալի: Սարերի գագաթների արծաթափայլ ձյունը հալվում, գետակներ կաղմած, խառնվում եր Արաքսի հորձանքին: Յերեմի պարզ, հանգիստ ու դանդաղ հօսող Արաքսը դարձավ պղտոր, խելագար, հուժկու, ափերից դուրս գալով՝ ալիքները տարածեց իր շուրջը, վոգողեց իրեն զուղընթաց յերկայնությամբ ձգվող միակ խճուղին:

Յերթևեկությունն անհնար դարձավ: Միակ փայտե կամուրջից, վոր միացնում եր յերկու ափերը, մնացին մի քանի գերաններ, վորոնք գետի հոսանքի ուժեղ ապտակներից արդեն խոնարհվել, թերվել եյին:

Խճուղու բանվորները, վոր երես ուտեստի պաշարը ստանում եյին Կ. գյուղից, կարվեցին վերջնից, իրենց վրանները տեղափոխեցին մոռակա լեռների լանջերին յերբեմնի յեղած գյուղերի ավերակները և մի կերպ հայթայթում եյին իրենց պաշարը:

Ճակատի գրությունն ել միսիթարական չեր: Միակ խճուղու վողողման հետեանքով տրանսպորտը կանգ առավ: Այդ պատճառով Պարսկաստանից և Սարիղամիշից սարերի գրայով, ուղտերով, եշերով ու մարդկանց շալակներով եյին հաց ու ուազմամթերք հասցնում ճակատին: Բնական ե, վոր փոխադրության այդ միջոցներով հարյուր հազարանոց բանակ կերակրել անկարելի յեր և այնքան կոփը չեր հնձում մարդկանց, վորքան սովը:

Կ. գյուղը մոռացվել եր, վորովհետև նա «թիկունքի» հաշվում եր: Սովի ուրվականը կախված յեր գյուղի «ընակիչ» աղնվատոհմ չինովնիկների գլխին: Ապիտակ ձեռնոցներով և ուղտի մազի գամաշներով մնձացած «պապաշաների բալիկները» սալսափահար եյին, յեղել նրանց աչքերից արտասուրը չեր կտրում, «մամա», «պապա» ու դրանց հաջորդող «ոխ»-երը շարունակ հոլովվում եյին նրանց բերաններում: Միայն Տիգոն ու Զինդին եյին, վոր նրանց վրա նայում եյին սառնարյուն ու ծիծառում:

Պետք եր փրկել Կ. գյուղը սովից:

Գծի պետը իր հույսը գրել եր «առւզեմցիների» վրա, իսկ զրանք յերկու հոգի եյին, Տիգոն ու Զինդին կամ «Երաթիրոսն» ու «Յեփրեմը»:

Մի առավոտ, յերբ «պապիկների թոռնիկները» դեռ քաղցր քնած եյին, պետը իր մոտ և կանչում Տիգոյին.

— Յես գիտեմ, վոր դու անխախ ու խելոք տղամարդ ես, այս դրությունից պետք և մեզ ազատես, ընդամենը յերեք պարկ ալյուր և մնացել վորը միայն յերկու որ և բավական... Վերցրու հետդ ում կուզնէ, ընտրիր ամենալավ ձիյերը, առ այս փողերն ու ինչ գնով ու միջոցով ել լինի՝ ալյուր հասցրու...

Տիգոն մնացել եր շվարած: Մտածում եր. «յեթե մերժեմ, կասեն վախկոտ ե, յեթե գնամ» ում համար բերեմ... մեր տզրուկների, վորոնց հայրերը քաղաքում մեր արյուն-քրտինքով պալատներ են կառուցել իսկ վորդիքը այստեղ մեր վզին նստել... Բայց վհչ, սովամահ անելը պայքարի ձև չե, մենք բողոքում ենք նման վոճագործության դեմ»...

Յեվ Տիգոն ու Զինդին կես ժամից հետո ընտիր նժույգներին հեծած, հրացանները մեջքներին կախած բռնեցին Մ. գյուղի ճանապարհը, վոր Զինդին լավ ծանոթ եր:

**

Ճանապարհից ու աշքից հեռու, իսոր ձորից բարձրացող, մի վոտնաչափ լայնություն ունեցող նեղ-լիկ, ոձապտույտ ուղին տանում եր դեպի ավերակների աշխարհը:

Մոտ 200-ի չափ քրդեր, տարբեր գյուղերից, պյավուրների ձևովից ազատվել և այդտեղ պատսպարվել են: Այդ գյուղի իշխան զառամյալ 70-ամյա շեյխ-Խուզըն նրանց ճարած թալանի, վորսի, աշխատանքի մեծ բաժինը ինքը վերցնելով՝ մի քանի գետնափոր խցերում ամբարել եր բավականաշատ բարիք-ներ — հարյուրավոր պարկերով ալյուր, շաքար, յուղ, ապուխտ և այլն, իսկ նրա վոչխարն ու տավարը հավասար եր ամբողջ գյուղի ունեցածի թվին: Վայ նրան, ով իր ճարած վորսից կամ աշխատած դրամից բաժին չեր հանի շեյխին, — անեծք, նողկանը կթափեր նրա գլխին ու գյուղից կվոնդեր, նա գյուղի միահեծան տերն եր: Յերբ «հասարակ մահկանացու» գյուղացիներն իրենց սակավ պաշարը վերջացնում են, իրենց ունեցած վերջին ամաններն ու շորերը բերում են շեյխին, վերջինս ել «մուննաթով» տալիս եր իրերի արժեքի կեսը իր ունեցած մթերքներից:

Կեսորից առաջ Տիգոն ու Զինդին Մ. գյուղի ծայրին կանգ առան: Հեռվից նրանց նկատած մի քանի քրդեր մոտեցան, ճանաչեցին Զինդիի գեմքը, ուղեցին բարեկը բայց... դա նա չեր, նա իրենց նման ֆես ու չալմա ուներ պլիսին կապած, իսկ սա ոսի գլխարկով եր, շինելով, նույնիսկ... հրացանով... Յետ քաշվեցին, խոր գլուխ տվին յերկուսին ել:

Զինդին ժպտաց, իմացավ նրանց միտքը և առաջինը սկսեց քրդերն բարեկը ու իր նախկին հարեւնների անունները տալ... Նրանք վրա վազեցին, միմյանց առաջելով, սկսեցին համբուրգել:

Կես ժամ տեսող զրույցի միջոցին Զինդին պատմեց իր գլխի անցածները, ծանոթացրեց Տիգոյի հետ,

հարցընեց նրանց հաւը: Ապա հարցընեց շեյխի Խուզոյի մասին, վորը մի ժամանակ այդ շրջանի շեյխերի գլխավորն եր: Գյուղացիները սոսկումով պատմեցին շեյխի ասպատակությունների մասին.

— Մենք ուտելու հաց չունենք, իսկ նրա ամբարները լիքն և ալյուրով ու շաքարով, մեր ունեցած վերջին շորերն ել ենք տվել, փոխարենը մի կող հաց հազիվ ենք գլել նրանից, չգիտենք, վոր որվա համար և պահում իր հարստությունը...

Ուրեմն Զինդին չեր սխալվել: Շեյխ-Խուզոն նրանց դրամով ալյուր կտա: Տիգոյի դրամները նրան կըկուրացնեն...

Քիչ հետո Տիգոն ու Զինդին քրդերի ուղեկցությամբ կանգնած եյին մի քարաշեն տան առաջ, վոր միակ կանգուն շենքն եր այդ գյուղում և նրանում ապրելու պատիվը վնչ վոք չեր կարող ունենալ գաղթած քրդերից, բացի շեյխ Խուզոյից: Նա միջին հասակով, յերկար մորուսով, կնճոռտ գեմքով ու մանր արագավազ աչքերով զառամյալ ծերուկ եր: Տեսնելով անծանոթ «հյուրերին», հանեց բերանից յերկար ծխամորձը, խոր գլուխ տվեց և հարցընեց նրանց առողջության մասին... Տիգոյի ու Զինդիի առողջությամբ Խուզոն այնքան եր հետաքրքրվում, վորքան մուկը կատարվու...

— Ղոջա Խուզո, մեր առողջությունը շատ լավ է, — պատասխանեց Զինդին քրդերեն, — շնորհակալ ենք, մինք յեկել ենք մի կարեռ գործի համար:

— Խեր ըլի, — վրա բերեց Խուզոն գեմքը խոժուելով, ապա ակամա ժպտաց, — այ տղա, դու մեր որհնյալ զավակներիցն եղ յերկում, եղ վոնց ես ընկել սրանց ձեռքը:

— Հա, դոջա Խուզո, յես ձեզանից եմ, դրա մասին հետո կխոսենք, Յես ու ընկերս յեկել ենք մի քիչ ալյուր գնելու: Վորքան ուզում ես փող վերցրու, մեղ մի քանի ջվալ ալյուր տուր, հարյուրից ավելի մարդիկ սովից կոտորվում են...

— Թոռ Ալլահը Խուզոյին պատժի, յեթե ունենա ու ձեղ պես պատվական հյուրերին դատարկ թողնի... Հենց այ, ես մեր խալիխն հարցրու, յերեկ յես ինքս ալյուրի համար դոնեղուռ եյի ընկել... Եղ քո բարի ուղեկցին հասկացրու, վոր շեյխ Խուզոն շատ բարի ու աղնիվ մարդ ե, յեթե ունենա՝ առանց փողի ել կըտա... այս ել մեր որհնյալ ոսի դոշունի համար, իմ գլուխը նրանց դուրբան կանեմ...

Զինդիի հավաստիացումները, նրա յերկար բացատրությունները իրենց դրության մասին, փաղիշաճի դրամների խսկական լինելը, ի զուր եյին:

Խուզոն շարունակում եր յերդվել ու կրկնել իր առաջվա խոսքերը:

Զինդիի ծանոթ քրդերը մի կողմ քաշված՝ ինչ վոր քչիչում եյին: Արդեն ամբողջ զյուղը զիտեր յեկածների մասին և ավերակների ստվերների տակ հավաքված փոքրիկ խմբերով վիճում եյին:

Իսկ Խուզոյի տան պատի յերկու թզաչափ փոքրիկ արանքից, վոր լուսամուտի համար եր բացված, մի փոքրիկ վտիտ կանացի դեմք աչքերը լայն բացած, շունչը կտրած ազահաբար նայում եր ուղիղ Զինդիին: Դեմքը նրա դեմքի նման եր, շարժ ու ձեերը՝ խսկական, բայց... գուցե աչքերը խարում եյին իրեն... դուխը թեքեց, աչ ականջը զլեց, ուզեց նրա ձայնը փորսալ: Զայնն ել նրանն ե...

Մինչ Զինդիին ու Տիգոն շեյխի հետ տաք խոսակցության մեջ եյին, շեյխի տան ցածրիկ ու նեղիկ դուռը բացվեց, վորից փոքրիկ քրդուհին թռչնի արագությամբ դուրս թռավ զինդիի գիրկը:

— Զինդի՛ի...

Զինդիի խսկույն ճանաչեց իր մի տարի առաջ կորցրած Զարեյին, պինդ զրկեց նրան և յերկուսով սկսեցին հեկեկալ ու համբուրվել:

Շեյխ Խուզոն խսկույն ներա ընկավ տուն, վերցրեց իր պատից կախված յերկար ու կեռ դաշույնը, դուրս վագեց նորից, ուզեց հարձակվել զրկախառնված հարազատների վրա... Տիգոն իրան չկորցրեց, խսկույն հասկացավ շեյխի միտքը, մի ակնթարթում հանեց ատրճանակն ու յերեք իրար հաջորդող հարվածով գետին գլորեց Խուզոյին:

Բոլորը մնացին տեղները քարացած:

Գյուղը իրար անցավ, կին, տղամարդ, մեծ ու փոքր ահարեկված, վագում եյին դեպի Խուզոյի տունը: Տիսնելով տան առաջ Խուզոյի անշնչացած դիակը, ուրախացան, սկսեցին թքել հայրոյել նրան:

— Շուն եյիր, շան նման ել սատկեցիր:

— Մեր մեղքերից քյոփակ հոգիդ թող տանջվի:

— Քո սիրած ալլահը պատիժդ տվեց...

Զինդիին բարձրացավ մի քարի վրա ու արցունքից խեղվող ձայնով խոսեց քրդերեն: Պատմեց իրենց գալու նպատակի իր կորցրած քրո՞ջ Զարեյի անսպասելի յերկալու և Խուզոյի սպանության պատճառների մասին:

Գյուղացիք հիասթափվեցին: Խուզոն հավատացրել եր իր հոտին, վոր նա Զարեյին, ըստ իրենց սու

վորության, գնել ե իր ծնողներից 20 վուկով... Բայց
պարզվեց, վոր Խուդոն գաղթի ժամանակ Զարեհին
հափշտակել ե ըստի կերպով, ծեծով տարել ե իր վորչը,
սեփականել:

Նրանք ցույց տվին շեյխ Խուդոյի գետնափոր
պահեստները, քանդեցին քարով պատած մուտքը: Տի-
գոյի առաջարկով դյուղացիք իրենցից ընտրեցին յե-
րեք մարդ, վորոնց հանձնարարվեց բոլոր մթերքներն
ու ալյուրի վորոշ մասը հավասար քաժանել զյուղացի-
ներին, իսկ ալյուրի՝ մի մասը Տիգոն կարգադրեց,
յերկրորդ որը առավոտյան հասցնել կ. գյուղը, վորի
փոխադրելու արժեքը նա իսկույն վճարեց:

Գյուղը գոհ մնաց:

Մութն ընկել եր արդեն, յերբ Տիգոն, Զինուին ու
Զարեն կ. գյուղում իջան ձիերից:

Իսկ յերկրորդ որը առավոտյան կ. գյուղի պա-
հաստապետը ընդունեց 40 զվալ ալյուր, վոր քրդերը
բերել ելին եշերով.

Սովոր ուրվականն անցել եր կ. գյուղից:

Արաքսը դեռ չեր հանգստացել. նա իր վարար
ալիքների հորձանքով շարունակում եր հեղեղել ամայի
գաշտերը, բողոքի և ցասումի փրփուրները զարկում եր
ամեն կողմ, ասես նողկանք ու ատելություն արտա-
հայտում իր շուրջը, փորձում եր իր գիրկն առնել
խեղդել բոլորին, ավերել կործանել ամեն ինչ...

Նա իր սպառնական ձայնն ավելի եր սաստկա-
ցնում մանավանդ զիշերը, յերբ կ. գյուղի բնակիչները

դատարկաբանությունից, շատերն ել թղթախաղից հոգ-
նած՝ փորձում ելին քնել բայց իզուր...

Արաքսի խորհրդավոր սպառնակիքը խլացնում եր
նրանց, նրա սպառնական խշոցն ու վայրենի սուլոցը
կոշմարային սասառու եր տարածում ամենուրեք:

Այդ մղձավանջային զիշերներից մեկն եր, յերբ
Տիգոն գծի պետի առանձնասենյակում, լսում եր նրա
հորդորը:

— Յես «մեծ» մարդ գառնալու կամ «հերոս» հըռ-
չակվելու ձգտում ու ցանկը թյուն չունեմ. յես միայն
կատարեցի իմ պարտականությունը, — ասաց Տիգոն:

— Իսկ կայսերական կառավարությունն ամենա-
վողորմածաբար գիտե գնահատել իրենց պարտականու-
թյունները կատարող անձնվեր հերոսներին: Քո հա-
մեստությունն իմ մեջ վբովմունք և առաջ բերում, —
ասաց պետն ու շարունակեց գրել «միջնորդություն»-ը:

— Դուք իզուր եք նեղություն կրում, յես իմ
պարտականությունը կատարել եմ վոչ թե կայսերական
կառավարության հանդեպ այլ մարդկանց սովից ազա-
տելու համար, յես վոչ մի համեստություն չեմ ցուցա-
դրում, մերժելով ձեր «վողորմած» վերաբերմունքը,
չեմ ցանկանում կրծքիս վրա կրել ինձ այնքան ել
դուք չեկող մետաղի կտորը...

— Ոհո... ի՞նչ ասացիր... «մետաղի կտոր»...
Լավ... Դու ուրեմն անպատճեմ ու անարգում ես նո-
րին մեծության ամենանվիրական ու պատվավոր շքա-
նշանը, վորն իրենց կրծքին կրելու պատիվ ունեն հայ-
րենիքի ամենաարժանավոր զավակիները, վորոնց հերո-
սությունների զնորհիվ պաշտպանվում ե ցարի ու հայ-
րենիքի պատիվը, — զայրույթն ու ներքին կատարու-

թյունը հազիվ զսպելով ասաց պետն ու մատով ցույց տվեց Տիգոյին սենյակի դռւուր:

Տիգոյի դռւրս զալուց հետո, պետը վերցրեց իր առաջ զրված թղթի կտորը, մի քանի անգամ կարդաց՝ մի քանի բոսկ առաջ իր ձեռքով գրմած միջնորդությունը՝

«Ենուդու վերահսկիչ Մարտիրոսի անձնվեր ներսության շնորհիվ Մ. զյուղում հայտնաբերվեց թեմանու ուժեղ գումարտակ, վորբ պիտի հարձակվեր գիշերով մեր թիկունքից: Իմ զեկավարությամբ ամբողջ գումարտակն արի հաւաքեց, մեծ հանակուրյամբ պաշար յեկ գերիներ վերցրիմք... Միջնորդում եմ ձեր գերազանցության առաջ պարզեվատել Մարտիրոսին և Գեվորգի Շահնշանով, իսկ իմ՝ դեպի հայրենիքը ցույց տված սիրույս գնահատականը բողնում եմ Ձեր ամենավողորմած հայեցողության»...

— Այլպես, համ... յես քեզ ցույց կտամ, ըմբոստ սրիկա... Միենալոյն ե, այս միջնորդությունն ուղարկելու յեմ... յես քեզ հետ կխոսեմ սրա պատասխանն ստանալուց հետո, — ինամքով ստորագրեց, ապա կընքեց «միջնորդությունն» ու զբեց իր սեղանի «կարեվոր» թղթերի մեջ, վորպեսզի հետեւյալ որը գործավարն ուղարկի բանակի հրամանատարին:

* *

Բասենի հարթավայրում Արաքսը շուտ-շուտ և փոփոխվում. յերեմինի խրոխտ, սպառնական, հուժկու, ամբողջ դաշտավայրն իր ալիքների տակ արած պղտոր ու հսկա Արաքսը դարձավ մեղմ, խեղմ, փոքր, անձայն, թևերը հավաքած իր ձորակում՝ անուշ սվոցով, հանդարտ ու պարզ հոսում ե, ասես յերեկվա խելազարը չի այլես:

Յեվ նորից բացվում ե խճուղին, նորից տնկվում են ձանապարհի յերկարությամբ բանվորների վրան-ները, նորից հազարավորներ աշխատում են կիսովի կապալառուների համար, ձանապարհ են կառուցում՝ այլանդակված ու կիսաքաղց, վիրավոր, կիսամեռ, սառած ու տիֆի տաքության մեջ այրվող, ճակատից դեպի թիկունք տեղափոխվող և թիկունքից դեպի ճակատ մեկնող «հանգստացած» իրենց տնտեսությունն ու յերեխաներին անտեր-անտիրական թողած, թընդանութիւն մսացու հազարավորների համար...

Ուղիղ մի ամառ, աշուն ու ձմեռ տեսեց այս միապաղադ, միանման, սիրտ մաշող յերթեեկությունը: Միշտ միենույն տնքոցը, նվոցը, մոնչոցն եր լսվում խճուղու կիսակենդան ձանապարհորդներից:

Դժի պետն որ-որի վրա սպասում եր իր «միջնորդության» պատասխանին: Տիգոն միշտ վրաններումն եր, նա խոսեցնում, պատմել եր տալիս բանվորներին իրենց ընտանիքներից ստացած նամակների բովանդակությունը:

— Մարտիրոս ջան, ախր ես ինչ բան ա, վոր մեր տներից մի սալամաթ զիր չենք ստանում, չիմ ել կողը կարած, յա փակետի միջի նամակը մկրտով կես արած, յենա ծիրոյով կպցրած, յա նամակի կեսը ջնջած, — հարցրեց Տիգոյին յերիտասարդ Սաքոն:

Տիգոն գլուխը տատանեց, դառն ժպտաց և թողեց, վոր մեջ ընկնող Միկիչը խոսի.

— Ա տնածակ, բա յես քեզ ասի վճչ, վոր վայեննի ցենզուր կա ամեն տեղ, սկի կթնդան վոր քու ողուշաղից մի դրուստ խարար իմանաս: Ցենզուրա ե, ցենզուր, սկի թողալ չի, վոր կնկանդ ափալը իմանաս...

— Թող Մարտիրոսն ասի, դու ի՞նչ ես քու զենցուր-մենզուրը խառնում իրար, խի չպտի իմանամ իմ կնկա ափալը...

— Շատ ճիշտ ե ասում Միկիչը. ամեն տեղ ցենցուր կա, նա քո անունով ուղարկած նամակը բաց ե անում, կարգում, յեթե մեջը ճշմարտություն ե գրած, իսկույն ջնջում կամ այն տեղը կտրում՝ դեմ ե գցում. իշխանությունը չի ուզում, վոր պյուղերում և քաղաքներում յեղած դժբանության մասին բանակում իմանաք, չի թե ֆրոնտը քայլայնք, կամ թե քո ընտանիքում պատահած դժբախտության մասին վոր լսես՝ միթե դու այստեղ կմնաս. իսկ թագավորի մարդիկ բոլորն ել ուզում են, վոր դու այստեղ մնաս, վոր իրանք ու իրանց թագավորն ապահով լինեն. Այ, հենց լրագրները վերցրու, դու հո կարդում ես, բա են ահագին սպիտակ տեղերն ինչու յեն դատարկ մնացել... ցենցուրը հանել ե, արգելել ե լրագրներին ճշմարտությունը գրել. Այստեղ ել յերկի ֆրոնտից ստացած ճշմարտությունն ե յեղել—ցենցուրը հանել ե:

Տիգոյի այս բացարությունը մի ընդհանուր զարմանք առաջ բերեց:

Միկիչը հաղթական ժեստով նորից մեջ ընկավ.

— Եթ, բա յես ասում չեյի, իմ խոսքը ծակ արասի եր... Մարտիրոսից առաջ ինձ նհենց մարդ ասել վոր եղ գործերումն ընկած-դուսեկած առ... հլա ասեց ել վոր չի թե փաթերակ բան գրես նամակումը, մեկ ա, տեղ չի հասնի...

— Այ, տեսնիւմ եք, տղերք ջան, — շարունակեց Տիգոն, — նույնիսկ չեն թողնում, վոր ձեր անից մի ճիշտ լուր իմանաք կամ դուք մի ճշմարտություն գրեք...

Այս ել թագավորի մեր դեմ կովելու մի զենքն ե, մեր աչքերը կապելու միջոցը...

Տիգոն յերկար կշարունակեր իր զբույցը, յեթե հանկարծ չմտաբերեր դուրսը, ցրտում իր կապած ձին, վոր շարունակ վոտքերը գետնին խփելով՝ ուզում եր հասկացնել Տիգոյին, վոր ժամանակ ե գնալու:

* *

Տիգոն յերբ ձիյուց իջավ, ախոռում մարդ չգտավ ձին հանձնելու. Պետի սենյակից «ուռաների» ու յերգերի ձայներ եր լսվում. վաղեց գեպի հանրակացարան, մարդ չկար, մտավ խոհանոց, ուր միայն Զինդին եր նստած ննջում վառարանի կողքին:

— Զինդի, ուր են խալիը, — հարցրեց Տիգոն զարմացած:

— Քեփ կենեն, Տիգո ջան...

— ի՞նչ քեփ:

— Քեփ ելի, սեսորիցներու հետ, նաչալնիկի ըով... գնա դու ել ժամանակ անցու...

— Զինդի, բա չիմացար եղ քեփի անունը:

— Ահ, զաթի կսեն նաչալնիկը քիչ եր մեծ, ելի մեծութեն են տված... մաղարիչ կենեն...

Տիգոն յերկար մտածմունքի մեջ ընկավ. ումեծություն... եղ վմր ծառայության համար... յերբ, ի՞նչ բանի համար... գուցե տեղափոխում են ավելի բարձր պաշտոնովյա:

— Ե՞յ, տուզեմեց, ի՞նչ ես հիմարի նման գլուխդ կախ զցած ապուշ կտրել, — բացականչեց խոհանոցի դանից վոտքերի վրա հազիկ կանգնած, արբած գրա-

սենյակապետ Անդրեյ Գրիգորևիչը, — այնտեղ քո կենացն են խմում՝ քո քաջագործության համար, պետի կինացը նրա խելացի դեկավարության համար, իսկ դու ամբողջ որը կորել ես... արի, միասին զնանք, մի ամաչի, յես իմ ձեռքով կկախեմ քո կրծքին սուրբ Գևորգի խաչը...

— «Գյորգևսկի կավալեր»...

Տիգոն նոր միայն գլխի ընկավ, թէ ինչ ե «քեփի անունը»... Արբած գրասենյակապետի ձեռքից մի կերպ ազատվեց:

Մինչև լույս տեսեց քեփը, Տասնյակներով գինու և կոնյակի շնոր դատարկվեցին, բաժականառեր, յերգեր ու համբույրներ փոխանակվեցին, իսկ Տիգոն հանգիստ քնած եր հանրակացարանի անկյունի մահճակալում: Զինդին դարձյալ նիրում եր խոհանոցի վառարանի մոտ:

* *

Փետրվարյան մահասարսուռ բորան բքին, ձյունախառն քամու թոցնող հոսանքի հետ հեռվից դեպի կ. գյուղն եր սլանում ձիավորների մի փոքրիկ խումբ: Գյուղի «ընակիչները» քաղցր յերազների, տարփանքի աշխարհն եյին անցել: Ամեն ինչ հանգիստ եր ու լուս:

Զիավորներից մեկն իջավ ձիյուց, շտապ քայլերով ուղղվեց դեպի հանրակացարան: Տիգոն հենց նոր եր վերկացել անկողնուց, ուզում եր զնալ լվացվելու, յեր դեմառդեմ, դուան մեջ հանդիպեց ատրճանակը ձեռքին մի առողջակապմ զինվորի.

— Դուք ձերբակալված եք. հավաքեցեք ձեր իրերն ու հետեւցեք ինձ:

Զինդին, վոր մինչ այդ դռանը կանգնած ձիավորներին եր գիտում ակնապիշ, բան չհասկացավ: Միայն յերբ Տիգոյի հետ խոսողի ձեռքի ատրճանակը տեսավ, նոր գլխի ընկավ:

— Ո՞ւր և ինչու համար, — հարցրեց Տիգոն:

— Դաշտային դատարան, այնտեղ կիմանաք...

Զինդիի գողը բոնիլ եր, լեզուն կարկամել... խոսք ասել չեր կարողանում... Միայն յերբ Տիգոն իր պայուսակն ու իրերը հավաքած դոնից գուրս եր գնում, Զինդին վրա ընկավ, գրկեց ու յերեխայի նման սկսեց լաւ:

Հինգ վերստ եր հեռավորությնուը կ. գյուղից մինչև յերկաթուղու կայարանը: Երջապատված ձիավորներով Տիգոն անընդհատ քայլում եր, յերբեմն ել յերբ յետ եր մնում — հայհոյանք կամ մտրակի հարված եր ուտում:

* *

Երգբումից դեպի Սարիղամիշ ձգվող նեղ յերկաթոծի կայարաններից մեկում, ուժեղ պահակների հսկողության տակ Տիգոն կծկվել եր իր մեծ կաշվե մուշտակի տակ, վորի մեջ, ըստ յերեսոյթին յերեք մարդ կարող եյին տեղափորվել... Գնացքի գալու ժամանակն անցել եր, ճակատից արձակուրդ մեկնող զինվորներ խումբ-խումբ իւնվում եյին կայարանի առաջ, շփոթվում, հայհոյում, հաճախ ել մոտենում եյին փակ կայարանի փոքրիկ դարբասին, գումար բռունցքով պինդ զարկում կայարանապետին պահանջում:

— Ո՞ւր ե այն շան ձագը... յերբ ե գալու գնացքը... Արձակուրդի մի որն հենց այստեղ ե կորչում... Ասում

ելին նրանք ու միմիանց հրելով յետ ու առաջ շտապում:

Բայց հենց վոր մի սպա եր յերկում, իրարանցումն իսկույն կանգնում եր. բոլորը մնում ելին տեղներն արձանացած, ձեռքերը դեպի գլխարկը տանելով պատվո նշան բռնում...

Վերտեղից այս սատանի ճուտն յերկաց այսեղ,—ասում ելին միմիանց զինվորներն ու աշխատում հեռու գնալ սպայից, աղատ շաբժվելու նպատակով:

Քանի գնում, կայարանի առաջ խտանում եր զինվորների բազմությունը:

Տիգոյի պահակներից մեկը, վոր ձիյերը տարել եր հանձնելու մոտիկ տրանսպորտին, վերադարձավ:

— Եյ, սատանա, ուր յետ, ինչու ուշացար, մենք հոգնեցինք կանգնած, այժմ նայիր սրան, մենք գնանք թեյ ճարելու, — ասաց պահակապետն ու յերկուսով գնացին դեպի ձորն ի վեր ցցված տախտակամած խոհանոցը, ուր բացի փոքրիկ ինքնայեռից ու մի քանի բաժակներից ուրիշ բան չկար:

Հեռվից յերկաց փոքրիկ շոգեշարժը, վոր այս ու այն կողմը ծոմովելով շտապում եր հանգստացնելու կայարանում ծայր տված դժոնությունը:

Մի անսովոր իրարանցում սկսվեց կայարանի առջև՝ Գուռում-գոչյունով, միմիանց հրելով, ամեն մեկն աշխատում եր առաջ անցնել՝ փոքրիկ բաց վագոններում տեղ գրավելու համար, իրար բղկացցից առաջ յեկավ առւր ու դմիոց, հոհոելով դիպան Տիգոյի պահակին, պահակը գլորվեց, կովողներն ընկան նրա վրա, բազմությունը շրջապատեց սրանց, բարձ-

րացըին տեղից ցեխում կլոլված կովողներին ու պահակին...

Պահակն աչքերը հառեց ընկած քուրքին, բարձրացը ծայրը, Տիգոյի տեղ մի փոքրիկ կապոց եր ընկած... Նույն բոպեյին մոտեցան մյուս յերկու պահակներն ել... նայեցին միմիանց յերեսին... Իսկույն դիմեցին կայարանի կոմենդանտի ոգնության, հեռագրներ տվին բոլոր կայարաններին, տրանսպորտից ձիյեր ու հետախույզներ վերցրին, ուղղվեցին տարբեր կողմեր Տիգոյին փնտուելու:

* *

Քյորվիքոյի կայարանը հանգույցային կետ ե, վորտեղից ճանապարհները խաչածե տանում են դեպի երգում, Սարիղամիշ Խնուս և Ռլթի (Խճուղիներով): Այդ ճանապարհներից բացի, Տիգոն ծանոթ եր այծերի սիրած ամեն ժայռի քերծին, վատկների վոլորապը - տույտ ընթացքն իրենց մեջ թագցնող խոր ձորերին, բարձրականդակի յերկայնությամբ ցրված գյուղերի ավերակներին, դեպի Սարիղամիշ ձգվող անտառի միջի թելերի նման զիգզագ խճճված նեղլիկ ուղիներին:

Յերեք որ ու զիշեր թափառեց Տիգոն այդ վայրի աշխարհում: Կես գիշերին մոռ եր, յերբ հոգնած, ուժասպառ, անքնությունից շշմած՝ նա իրեն մի կերպ գցեց Սարիղամիշի կայարանի ծայրին կանգնած զինվորական զնացքի վագոններից մեկը, վոր պատրաստ եր մեկնելու:

Նա կծկվեց վագոնի բարձր դարակներից մեկի վրա, խփեց աչքերն ու անուշ մրափեց:

* *

Թիֆլիսի կայարանից ահադին տարածությամբ
հեռու կանգ առաջ գնացքը:

— Չեն թողնում մոտենալ կայարանին, միտինդ
և այնակող—ասաց զինվորներից մեկն ու վոտքով շտա-
պեց դեպի կայարան:

Ամբողջ գնացքը դատարկվեց: Բոլորը վազում
եյին դեպի կայարան: Դրանց մեջ եր և հերիս վաղող
Տիգոն:

Տիգոն վրա հասավ միտինդին այն ժամանակ,
յերբ ամբիոնի վրա կանգնած յերիտասարդը թագա-
վորի գահընկեցության հեռագիրն եր կարդում:

«Դեպի նոր բարրկադներ»—մտմտած ուրախու-
թյան արցունքներն աչքերին վորուրված Տիգոն ու
խառնվեց հեղափոխության ծովի փոթորկվող ալիք-
ներին:

* *

Անցան ամիսներ: Տիգոն լուս եր:

— Թե հեղափոխություն ե, թագավորին գահըն-
կեց արի՞ն, ել ի՞նչպես թագավորի նախկին մինիստըր-
ներն ու կապիտալիստները մնացին գործի զլիխն, ել
ինչու յե շարունակվում պատերազմը, ինչու բանվոր-
ների դրությունը վոչնչով չփոխվեց, — ասաց Մարոն,
յերբ կես զիշերին պատրաստվում եր գնալ հերթի
կանգնելու մի քառորդ ֆունտ յիգիպտացրենի շաղախ
ստանալու համար:

— Վոշինչ, Մարո ջան, սրանց հաշիվը ել շուտով
կտեսնեք, — հանգստացրեց Տիգոն:

— Ինչ արել եր՝ են մի նիկոլայն եր արել..., հի-
մա ավելի յեն շատացել նրա տեղակալները:

— Մարո ջան, դու հույսդ մի կորցնի, յերեկ
շկարդացիք լրագրում պուտիլովցիների և դորքի ա-
պստամբությունների մասին:

— Յես շատ բան կարդացի, զլիխս խելք և մնա-
ցել, վոր բոլորը հիշեմ: Յերեխեքը հացի համար նն լա-
լիս, իսկ մի քառորդ ֆունտ ճաղի համար կես զիշե-
րին եմ զնում հերթ բռնելու... յերեկ ճիլոբն եմ քան-
դել յերեխու շոր կարել, նավթը հո դառել և թռչուն,
նրան հասնել չի լինում, մննակ մենշեկները լույս
վառելու պատիվ ունեն...

— Եօ, դու վատթարը կտեսնես, յերը մենշեկէ-
ների պատվերով յեկող անգլիացիներն այդ ել կորբեն,
կտանեն, — ասաց Տիգոն ու խորը հոգոց քաշեց: Իսկ
Մարոն շտապեց ճաղի հերթ բռնելու:

* *

Բավական ժամանակ եր անցել Մարոյի գնալուց
հետո: Քնարիկն ու Ստեփանիկը վաղուց եյին հազնիկ
ու աչքերը գեպի դուռն հառած՝ սպասում եյին ճաղին:

Տիգոն ելլվացվել մի բաժակ թեյն առաջը դրած՝
խորասուզվել եր մի ինչ վոր ձեռագրի մեջ:

— Տիգոյի բնակարանն ե այս, — հարցըց բաց դըռ-
նից վիզը յերկարացնելով՝ կանաչ անգլիական շինելը
հագին, սպառազինված յերիտասարդ:

Տիգոն իսկույն սեղանի սփոսցի բաց ծայրը ծած-
կեց ձևագրի վրա և մոտեցավ նորեկին:

— Յես ինքս եմ:

— Ժողովրդական գվարդիայի շտաբի կարգադրությամբ հենց այժմ պետք են ներկայանաք հատուկ բաժանմունքին:

— Կես ժամից յես անձամբ կդամ:

— Վոչ մի ըոպե սպասել չեմ կարող,—ասաց ու առաջարկեց Տիգոյին հետևել իրեն:

Մարոն, յերբ մի փունտ ճաղին (չորս հոգու բաժին) ձեռքին, ներս մտնելով տեսավ զինված գվարդիականին—շամեց, «Դարձյալ նոր պատուհաս»... մըմնջաց ու սկսեց հեկեկալ:

Տիգոն հանգստացրեց նրան, թե՛ առանձին բան չի կարող լինել և հասկացրեց, վոր սփրոցի տակի ձեռագիրն իր գնալուց հետո անմիջապես վոչչացնի: Այնուհետև համբուրեց Մարոյին ու յերեխաներին և գվարդիականի ուղեկցությամբ քնաց «Հատուկ բաժանմունք»:

* *

Մի ընդարձակ սրահում, պատի ամբողջ յերկարությամբ շարված աթոռների վրա նստած եյին 20-ի չափ Տիգոյի ընկերները,—վորոնք նրա հետ միասին նախորդ որը մասնակցում եյին խորհրդակցության: Բոլորն ել տիսուր եյին, անձայն նայում եյին միմիանց ու դիմագծերով հասկացնում գործի լրջությունը:

Իսկ սրահում յետ ու առաջ քայլող և դուռը կանգնած գվարդիականներն ականջները սրած, ուղադրությամբ հետևում եյին—ըլինի թե այդ մարդիկ մի փաստ ևս տան իրենց բոլշևիկ լինելը հաստատելու համար:

Սակայն իզուր: Մեռելային լուսվյունը պատել եր ամբողջ սրահը:

Վերջապես բացվեց «հատուկ բաժանմունքի» պետի կաբինետի դռւուը—մեկ-մեկ կանչեցին դրսում նստածներին: Հերթը շուտով հասավ Տիգոյին:

— Եղ, դու յես, Տիգո, — դիմեց պետն ու մտաբերեց 1905 թ. հեղափոխությունը, յերբ դեռ յերկուամ ել պատանի եյին, յերկուսն ել աշխատում եյին մի-կնույն տպարանում, սոցիալ-դեմոկրատների գաղտնի բջիջի անդամներ եյին, յերբ միասին թուոցիկներ եյին տարածում, յերբ Տիգոն կողակների հետապնդումից ազատեց իրեն...

Այդ անցյալի հուշերը պատկերացան նաև Տիգոյին, մի քանի վարկան նա տեղափոխվեց 1905 թիվուն եկրանի ժապավենի նման անցան նրա աշքի առաջ այն բոլորը, ինչ վոր նույն վարկանին պատկերացել եյին իր խոսակցին:

— Վասո, ինչ բանի համար յես կանչել, — վերջապես խոսեց Տիգոն:

— Այնքան ել լավ բան չե: Տիգո, յես քեզանից չեյի սպասում, վոր դու այդ անամոթների հետ կլինես...

— Ինչ անամոթներ... պարզ խոսիր, վասո:

— Հը, վոնց թե չգիտես... յես քեզ բարի խորհուրդ եմ տալիս ձեռք վերցրու բոլշևիկներից... արի հենած հետ, մեղք յես, վերջի վերջո դրանք վոչ թե հենած դափնիականներ են, այլ բանդիտներ...

Տիգոն հուզվեց, այլայլվեց, մի ըոպե մոռացավ, վոր իր դիմաց այժմ կանգնած ե վոչ թե իր ընկերը, այլ թշնամին:

— Դու սուտ ևս խոսում, բոլշևիկները բանդիտներ չեն, այլ բանվորական դատի խսկական պաշտպան-

ներ... Յես յեղբեք չեմ կարող գնալ նրա հետ, վոր միացել և աղնվականներին, բուրժույներին, շովենստներին ու անգլիական խմաներին իդունի ու Դենիլինի բանդաների հետ միացած՝ դավեր և լարում բանվորների ու գյուղացիների դեմ...

— Յես քո ձայնը փորդ կցցեմ այս բոպեյիս... դու մի մոռանա, վոր իմ հայրենիքի շահերը ինձ համար շատ ավելի բարձր են, քան քեզ հետ անցկացրած պատանեկությունը...

— Իսկ դու մի մոռանա, վոր ինձ համար պըուետարական հեղափոխությունը շատ ավելի բարձր է, քան քո «հայրենասիրական զգացմունքները»...

— Լոիր, այժմ քեզ հետ խոսում ե վոչ թե Վասն, այլ «հատուկ բաժանմունքի» պետը: Վոչ մի խոսք այլն:

Ստորագրիր, վոր 24 ժամվա ընթացքում պետք ե թողնես Վրաստանի սահմանները... հակառակ դեպքում պատասխանափությունն ամբողջապես ընկնում ե քեզ վրա, — ասաց Վասն խստասիրու ասպետի տոնով ու պատրաստ ըլանկը դրեց Տիգոյի առաջ:

Տիգոն կիսահեգնական հայացքը շեշտակի ուղղեց Վասոյի աչքերին. զրիչը վերցրեց, կարդաց թուղթն ու ստորագրեց այս: Իսկ թերթի վրա նախորոք մոտավորապես գրված եր.

«Յես բոլշևիկյան կուսակցության անդամ... պարտավորվում եմ քսանչորս ժամվա ընթացքում ընդմիշտ հեռանալ Վրաստանի սահմաններից: Պարտավորությունս չկատարելու դեպքում հատուկ բաժանմունքի հետագա գործողության պատասխանատվությունն ամբողջապես ընկնում ե ինձ վրա»:

— Յեթե կինը տասը ոռությի յե իջնում, ինչու տղամարդը տասնեհինգից պակաս պետք ե իջնի...

— Ի վարկե, ի հարկե,—վրա բերեց ինժ. Ծպտույանը:

Թեպետ Խանքեղյանն աշխատում եր արտաքուստ այդ բանին սովորական բնույթ տալ, չհուզվել, չկարմրել: այնուամենայնիվ չեր աջողվում: Արդեն յերկու կապոց չերվոնեցը չքացել եյին նրա առջեկց: Նրա սիրալ սովորականից արագ եր խփում, մարմինը մերթ տաքանում, մերթ սառչում եր, ներքին ալեկոծումը բռնկել եր, ճակատին յերևացող քրտինքն ու ձեռքերի դողոցը մատնում եյին նրան... նա շուտ-շուտ ձեռքը ճակատին եր շփում, կամ ակամա սրախոսում, ծածկելու համար իր հուզմունքը, սակայն ի զուր: Խաղակիցներն արդեն նկատել եյին, վոր Խանքեղյանը կորցրել ե իր հավասարակշուռթյունն և ավելի աղարտի եյին բերում նրան: Այժմ արդեն քսան և քսանհինգական ոռությի եյին իջնում, նրանց հետեւում եր Խանքեղյանը:

— Ը, ընկերներ, բավական ե, խաղը վերջացնենք, ճաշի սեղանը պատրաստ ե. Մելիք Բոգդանիչը ժամանակ չունի, խնդրում եմ զեպի նա ներողամիտ լինել—ասաց ինժ. Ծպտույանն ու առաջինն ինքը վոտքի յելավ:

— Շատ տանուկ տվիք, Մելիք Բոգդանիչ:

— Ցիմարություն, կոպեկներ...

— Համենյան գեպս, վնրքան:

— Յերեք և կես հարյուր:

— Վոզինչ, մի ուրիշ անգամ՝ այս կանանց համեմատ կպահք, — ասաց Ծպտունյանը, աչքի թեթև շարժումով ցույց տալով Ալգա Կիրիլովիալին:

* * *

Ճաշն իր յեռուն շրջանումն եր: Սեղանակիցներն
արդեն տաքացել կարմրել ու շատախոս եյին գարձել:
Ուզա Կիրիլովան Խանքեզյանի կողքին նստած շա-
րունակ նրա կենացն եր խմում, իսկ վերջինս ել նրա
մտրմարե-սպիտակ թևն իր շրթունքներին մոտեցնե-
լով համբուրում եր՝ ի նշան շնորհակալության:

Ծպտունյանն ու Նատալիա Կարպովսան յետ չե-
յին մոռւմ նրանցից: Զեռքի և թևի համբույրը հասավ
մինչև այտերն ու շրթունքները... Ապա յերգ, պար,
դրկախառնությունն...

Մինչ Խանքեգյանը կյանքի այս քաղցր հյութով
եր հագենում, գործարանի կարմիր անկյունը լեզ-
բանվորներն անհամբեր սպասում եյին նրա զեկուց-
ման:

Ոլգա Կիրիլովնայի քնքույշ ծեռքն իր շրթունքներին մոտեցնելիս Խանքեզյանի աջերը հանդիպեցին Նրա ձեռքի փոքրիկ ժամացույցին։ Նա վոտքի յելափ, վերցրեց բաժակն ու իր հրաժեշտի խոսքն ասաց։

— Թեպէտ շատ եմ ցավում, վոր բաժանվելու
յիմ ձեզպես աննման սեղանակիցներից, մանավանդ
Ուրա կիրիլովայից, այնուամենայնիվ ստիպված եմ
իմ բաժին ժամանցը զոհել քանի վոր գործարանում
հարյուրավոր բանվորներ սպասում են ինձ: Խնդրում
եմ ներողամիտ լինել: Մադթում եմ ձեզ յերկար կյանք:

Յերկի շատ հաճախ այսպիսի յերջանիկ հանդիպումներ
կունենանք և մեր մտերմությունը յերկարատեսկ կլինի:
— Կեցցե՞ն, կեցցե՞ն... Բուավո՞ն... բավեցին չորս կող-
մից ծափեր...

Ոլգա Կիրիլովնան թևանցուկ, խսկ մյուսներն ել
շրջապատած Խանքեղյանին մինչև բակի դռւոն ուղեկ-
ցեցին:

三

— Սա ինչ խայտառակություն ա, մենք կցրվենք,
եստեղ հո աչքակապուկ չենք խաղում, վեցին եք նշա-
նակել եսա յեռթնա դաւնում, ուր ա լիանբեկյանը,
— յավում ելին կարմիր անկրան արս ու այն կողմից:

Կոմբջիջի քարտուղարը հանգստացնում եր նը-
րանց: Այս անգամ վորոշեցին նորից տասը ըստե
սպասել յեթե չի դա զեկուցողն՝ այն ժամանակ կհե-
տաձգեն ժողովը:

— Հրես, Եկավ Խան-զադէն, — ասաց բանվորներից մեկն ու բոլորի հայացքները դեպի բակի մուտքն ուղղվեցին:

— Ինձ Ներկցեք, ընկերներ, յիս մեղավոր չեմ,
տրեստում յերկար պահեցին, այնտեղ կարևոր հար-
ցեր եր փորոշվում, հազիվ-հազ կարողացա պոկ գալ:

— Ներում ենք, ներում, սկսի տեսնենք,—լսվեց առաջին շարքերից:

— Ժվեժքան աչքերդ ու ճարիխալ գարսած սփաթդ
ել են ասում, վոր տրեստումն ես ըլել- ասաց սկ
բանվոր Սայազը հազիվ լսելի ձայնով՝ վորն իր մոտի
նստածների մեջ փոթէկող առաջ բերեց:

Խանքեզյանը յերկար խռուեց։ Մեկ ժամից ավելի

տեսող նրա զեկուցումից շատերը բան չհասկացան: Հին-
հին ցիրկուլյարներից ցիտատներ, դեկրետներից հոգ-
վածներ, դիրեկտիվներից կետեր բերեց: ապա թվեր,
համեմատական տոկոսներ շարեց, արդֆինալանի կա-
տարման համար տրեստի ձեռք առած միջոցները
թվեց, և վերջապես դուրս բերեց, վոր արդֆինալանը
վոչ միայն կատարել այլև զերակատարել ե գործարանը:

Զեկուցումից հետո սկսվեց հարցերի տարափը:

— Ի՞նչ հնարքով ենք գերակատարել արդֆին-
ալանը, յեթե առաջինից քիչ ենք արտադրում:

— Ինչն ե պատճառը վոր հիվանդանոցի մահ-
ճակաները կիսատ են մնացել:

— Ինչու սղոցագործարանի մեքենաների նորո-
գումը չենք սկսում:

— Ի՞նչ միջոցներ ե ձեռք առել աղմբնիստրա-
ցիան գործարանը յերկաթով բավարարելու համար:

— Ինչու պրոստոյը չի գրվում կամ վերջ աըր-
վում:

— Ինչու չի ոգտագործվում գործարանի բակում
թափած յերկաթը:

— Ինչու ինժեներ Շպտունյանը ուշ-ուշ ե յե-
րեսում գործարանում:

— Ինչու նոր գործ սկսելուց առաջ բանվորների
կարծիքը չեք լսում:

— Ինչու յեն մնում թղթի վրա արտադրական
խորհրդակցության վորոշումները:

— Ինչու ճաշարանի շենքը չեք կառուցում:

— Ինչու արդֆինալանը մեղ հասկանալի չեք
դարձնում կամ ինչու մենք չպետք ե զիտենանք, թէ
ամիսը կամ որը գործան ենք արտադրելու

Յեվ այլն, և այլն:

Այս հարցերին պատասխանելուց առաջ գիրեկ-
ոորը մի փոքր խորասուզվեց իր առաջ թափած
թղթերում, նրանցից ինչ վոր թվանշաններ արտագրեց,
մատիտով մի քանի տեղ նշան արեց և ապա սկսեց:

— Արդֆինալանը կաղմելիս մենք ի հարկե, աշ-
քի առաջ չունեյինք մեր յերկաթի քանակը, դա մե-
զանից անկախ եր, այնուամենայնիվ հետագայում
հաշվի կառնենք այլ...

— Ուրեմն անցյալ կվարտալում տապալել և վոչ
թե գերակատարել ենք արդֆինալանը, — լսվեց անկյու-
նից մի ձախ:

— Չենք տապալել, — շարունակեց գիրեկտորը, —
պանիկյոր չպետք ե լինել մենք իրազործել ենք և
կաշխատենք հետազյում ել իրավործել, բայց յեթե
այդ չի աջակի դրանում մենք մեղավոր չենք... Պայ-
մաններն են այդպես... Հիվանդանոցի մահճականների
կիսատ մնալը պետք ե վերագրել մեր ձուլարանի ար-
տադրության կուստար միջոցներին...

— Ինչու գուրս գրված ձուլող մեքենան գործի
չեք դնում, — նկատեց կենտրոնում նստած միջահասակ
բանվորը:

— Վորովհետեւ գրա համապատասխան շենք չու-
նենք...

— Բա վորտեղ եր ձեր գլուխը, թե վոր տեղ
չունեյիք, ել ինչի՞ զակազ տվիք մեքենան...

— Յեթե այդպես խելոք ես, ինչու մինչև հիմա
գիրեկտոր չես գարել, համեցեք, քեզ իմ տեղը, — զայ-
րացած կարեց բանվորի խոսքն ու ապա շարունակեց,
— յեթե ինձ կիսանդրեք, յես ստիպված կլինեմ հար-

յերին պատասխանելուց հրաժարվել... Հա, այսուհետեւ սղոցագործարանի մեքենաների նորոգումը չենք սկսում, որովհետև նրանց անհրաժեշտ մասերից միքանիսը պատվիրել ենք Մոսկվայի գործարանին, իսկ մնացած նորոգումները մի շաբաթվա գործ ե, մեր առաջ դեռ մի ամիս ունենք, շտապելու կարիք չկա... Հա, յեթե մոտ ժամանակներս մեր պատվիրած յերկաթը չստանանք՝ ստիպված կլինենք կրծատելու բանվորների թիվը... Ինձեներ Ծպտունյանի մասին հարց տվին. նա պարտավոր չե որերով մնալ գործարանում, Ծպտունյանն այժմ ել ուսումնասիրում ե ուրիշ գործարանների մեքենաները և նորոգումների պատվերներ ե վերցնելու մեզ համար: Պրոստոյը—լավ ե՝ վոր չինի, իսկ յեթե կա, յես ի՞նչ կարող եմ անել... Գործարանը դրանով վոչինչ չի կորցնում, այդ բանվորների հաշվին ե գնում, ում չի բավարարում աշխատավարձը՝ կարող ե հաշիվ վերցնել մենք դրա դեմ վոչինչ չունենք... Բակում թափված հին յերկաթը ոգտագործելու համար մենք անցյալ տարվանից վորոշում ունենք, բայց վորովհետև մինչեւ այժմ գնահատված ու կշռված չե, դրա համար ել չենք ոգտագործել հակառինական կլիներ՝ առանց գնահատման ոգտագործել...

— Ի՞նչու եք մինչեւ հիմա ձգձգել:

— Վորովհետև քո հրամանը դեռ չեյինք ստացել—դարձյալ շփոթվեց դիրեքտորն ու շարունակեց, — հաշարանի շենքը կառուցելու համար մենք միջոցներ չունենք: Բանվորների կարծիքը մենք՝ հաշվի կառնենք, յեթե նրանք խելացի յեն, սրանից մի ամիս առաջ Դալալյանը գլխին զու եր տվել, թե խառատի

դազգյահի կտրող ատամի կողքին յեթե մի լեզվակ ավելացնենք՝ դազգյահը կը կնակի արտադրություն կը տա... Ասացեք, ինողեմ, միթե գերմանական ինժեներները մի Դալալյանի չափ խելք չեն ունեցել կամ նրանք հիմար են յեղել, վոր դազգյահը յերկու ատամով կամ ավելորդ լեզվակով չեն շնորհ... ծիծաղելի յե, յերբ մի հասարակ բանվոր հավակնություն ունի համալսարանավարտ ինժեների գեմ մրցման դուրս գտնւ...

— Դա բյուրոկրատիզմն ե... Դա ծաղր ե մեր հասցեյին... Դա անթոյլատրելի յե... Դա հալածանք ե...

Լսվեցին այս ու այն կողմից բացականչություններ, աղմուկ: Նախագահը շարունակ զանգահարում և բռունցքը սեղանին եր խփում: Դիրեկտորի գույնը թռել, ներքին հուզմունքը բռնկել եր, բռունցքները սեղմած, ատամները կրծացնելով, քթածակերը լայնացրած իրեն հազիվ եր պահում, շարունակ՝ մտքում հայնում եր աղմկող բանվորներին ու ինքն իրանմատում: «Սպասեցէք, յես ձեզ հետ հաշիվս կմաքրեմ»...

Մեծ դժվարությամբ նախագահին աջողեց կարգի հրավիրել աղմկողներին: Դահլիճը լուց:

— Խնդրեմ, շարունակեցեք ընկեր Մելիք, — զիմեց նախագահը:

— Յես ավելորդ եմ համարում շարունակել շեմ կարող այլքս մնալ ժողովում, ուր մարդկային արժանապատվությունը վառնաբարում են:

Նախագահը ծածուկ դիրեքտորին մի քանի նախատական խոսք ասաց, վորից հետո վերջինս սկսեց.

— Ինձ մնում և միայն մի հարցի պատասխանել
այն ե, թե ինչու արդֆինալլանը բանվորների առաջ
չենք դնում և ցեխերի ու դագվյանների չենք բաժա-
նում: Ճիշտ ե, այդ մասին յեղել և դիրեկտիվ, բայց
հո պարտադիր չե բոլոր գործարանների համար... Յե-
թե արդֆինալլանը, ուրիշ խոսքով ասած՝ մեր գործա-
րանի ամբողջ տնտեսությունն ու հաշիվները զննենք
ձեր առաջ՝ ապա ել ինչացու հնք մենք, այդ գեպքում
խոխտվում ե միավարության սկզբունքը... Յեկ գե-
տեք ինչպիսի ահռելի հաշվապահական ծախսերի հետ
և կապված այդ. մենք ստիպված կլինենք մեր տեխ-
նիքական պերսոնալը մի քանի մարդով ավելացներ
վերադիր ծախսեր անել, առանձին հաշվառքի յենթար-
կել ամեն մի բանվորի արտադրությունը... իսկ վե-
րադիր ծախսերն ավելացնելու համար մենք պատաս-
խանատվության կենթարկվենք, իսկ գուք ձեռքներդ
կլվանաք, յետ կքաշվեք... Յեկ վերջապես ինչն և ձեզ
ստիպում խառնվել ագմինիստրացիայի գործերում...
Ինչու եք ձեր անցավ գլուխը ցավի մեջ գցում... Գը-
լուխներդ կռացրած, հանգիստ աշխատեցեք, ձեր աշ-
խատավարձը տարեք...

Նորից իրարանցում, շփոթ առաջ յեկալ գահի-
ճում.

— Դա բյուրոկրատական մոտեցում ե, դիրեկ-
տորը ծածկում ե մեզանից, այստեղ մի գաղտնիք
կա...

Նորից նախագահը զանգի և բոռւնցքի ոգնու-
թյան դիմեց, գարձյալ մեծ դժվարությամբ հանգստա-
ցրեց բանվորներին և ապա սկսեց.

— Ճիշտ ե, մեզանից շատերն ընդհատեցին դի-

րեկտորին, աղմկեցին, բայց դա չի նշանակում, վոր
դիրեկտորը պետք ե արհամարի բանվորներին և ծած-
կի իրերի դրությունը: Նա հենց սկզբից թույլ տվեց
մի շաբք սիսալներ, մեր հասցեյին շատ կոպիտ ու ան-
տակտ արտահայտություններ շպոտեց. այդ մասին մի
ուրիշ անդամ կիսունք, այժմ անցնենք ըստ եյության:

Ցուցակագրվեցին յենեսունից ավելի բանվորներ:
Բոլորն ել իրենց յելույթներում խարազանեցին դի-
րեկտորին ու շեշտեցին նրա անընդունակ դեկավա-
րությունը: Ամենից վերջը խոսեցին բջիջի քարտու-
ղարն ու սկսար Սաքոն:

— Այսպես թե այսպես, մենք կանգնած ենք կա-
տաստրոֆայի առաջ,—սկսեց կոմքիջի քարտուղարը,
— ամենից առաջ մենք պետք ե աշխատենք ընդհանուր
լեզու գտնել դիրեկտորի հետ. ընկեր Խանընդյանն
այնքան ել վատ տնտեսավար չե, ինչպես կարծում
են շատերը, ճիշտ ե, նա մի քանի սիսալներ ունի,
բայց մենք պետք ե ոգնենք նրան, ընդհանուր ուժե-
րով վերականգնելու գործարանի գրությունը: Յես ա-
ռաջարկում եմ մի յերրյակ ընտրել՝ պարզելու համար
մեզ մութ մնացած մի քանի վիճելի հարցեր և գործ-
նական առաջարկներ մշակելու, թե ինչպես անենք,
վոր հետագայում իրացնենք արդֆինալլանը: Յես ա-
ռաջարկում եմ իսկույն և եթ անցնել ընտրության և
հարցը փակված համարել:

Դիրեկտոր Խանընդյանը գլխով հավանության
նշան արեց ու ավելացրեց.

— Вот понимаю, деловое предложение...

Հերթը Սաքոնն եր: Սա մի փոքրիկ թղթի կտո-
րի վրա ինչ վոր նշաններ եր արել. ձեռքի մեջ պինդ

սեղմած թուղթը, բարձրացավ փոքրիկ բեմն ու սկըսեց.

— Ընկերներ, մենք վոչ յերեխաներ ենք, վոչ ել գիտնականներ, չգիտեմ մեր դիրեկտորն ինչի համար եր են հազարներն ու հարյուրները շարում... Պրացենտներ ենքան շարեց, վոր մեզանից մեկն ել ա բան չհասկացավ: Այսր, թե արդֆինալանը գերակատարել ենք—թող մեր դիրեկտորն ասի, թե եդ գերակատարումն ինչքան ոգուտ ա տվել գործարանին... Տո, սադ որերով բանվորները կանգնած են, մի կոպեկի գործ չեն շինում, գործարանի դռնից շինած ապրանք չի դուրս գնում, բանվորի աշխատավարձը հետնունետը քչանում ա, իսկ դիրեկտորի ու բուզգալտորի իրանց տանն արած հաշվով արդֆինալանը գերակատարվել ա... (Լսվեցին ծափեր), ապա տեղերից՝ «Ճիշտ ա, իրանց տանու հաշիվս ա»...

— Սպասեք, տղերը ջան, ինչ հարկավոր ա ծափերը, մեր դիրեքտորն առանց եդ ել ջղայնացած ա, թողեք հիմա մի քանի թաղա հարցեր տամ նրան,— շարունակեց սլեսար Սաքոն, — մեկ ասում ա թե գերակատարել ենք, մեկ ել թե «որեկտիվ» ու «մորեկտիվ» պատճառները խանգարել են... Բայց յեթե մեր դիրեկտորն ուղենար եդ «որեկտիվս» ու «մորեկտիվը» ձեռած կհանգնեցներ, հենց ենակես, մի քանի որ մի յերկու բանվորի կկանգնեցներ, կշոել կտար բակում թափած յերկաթը և բանվորները պարապ չեյին մնա, գործն առաջ կգնար... Մի քանի հեռագիր կտար՝ վոր մեդ հասանելիք յերկաթը շուտ հասցնեն... Եդ մեծ ձուլող մեքենայի տեղը մի քիչ փոքրը կպատվիրեր, վոր տեղավորվեր մեր ձուլաբանում... Սղոցագործա-

րանի զակազը յեթե մի շաբաթվա գործ ա, ել ուր ա ձգձգում մինչև հիմա, թող տա՝ նորոգենք, մի քանի որ ել շուտ պատրաստենք, սղոցագործարանն ել եր ծրագիրն ունի, ինչ ենք կորցնելու, յեթե մեքենայացման յենթարկելով՝ նա ել իր ծրագիրը գերակատարի... Բա ծիծաղելի չի, վոր պրոստոյը դիրեկտորը գործարանի մխարը չի համարում... Բանվորներին առաջարկում ա հեռանալ գործից, մեթե աշխատավարձից գժգոհ են... Պետք ա ասեմ, վոր մեր բոլորիս սխալը նրանումն ա, վոր մենք մինչև հիմա ես բոլոր խայտառակությունները չենք հասցըել ուր հարկավոր ա... Իսկ մեր բջիջն ու տեղիումն ել, հո գիտեք, ընկեր Խանբեգյանին բեղամաղ չանելու համար՝ նրա պոչից պոկ չեն գալիս...

— Խոսքիդ չափը ճանաչիր, — վրա բերեց տեղկոմի նախագահը:

— Ներողություն, վոր ճիշտն ասեցի, — շարունակեց Սաքոն, — մեր պատի թերթում, ենպես ել կենտրոնական թերթերում շատ ա գրվել մեր անհաշիվ բացերի մասին, յա տեղկոմը, յա բջիջը մի քան ել ա չեն արել, վոր ասենք թե նրանց սիրու ցավում ա մեր գործարանի համար...

— Ուրեմն դժւ եյիր գրողը, — կտրեց դիրեքտորը:

— Թե վոր գրանով հետաքրքրվում ես, այս, յես եյի և հիմա ել կրկնում եմ են բոլորը, ինչ վոր գըրեյի ա կտար մի քանի ամսվա ընթացքում: Այսուհետեւ, ընկերներ...

— Ժամանակը լրացավ, ընկեր Սաքոն, — ընդհատեց նախագահը:

Լարված ուշադրությամբ լսող դահլիճը մի մար-

դու նման վոտքի կանգնեց, այս ու այն կողմից լըս-
վեցին ձայներ՝

— Թողեք խոսի, թողեք խոսի...

— Շատ յերկար խոսեց, այսուղ գիշերելու հո-
չենք — նկատեց նախագահը:

— Յերկար, բայց տեղին խոսեց, թողեք վեր-
ջացնի: Յեկ գահլիճում իրարանցում առաջ յեկափ: Ա-
ռաջին շարքերում նստած գրասենյակի մի քանի ծա-
ռայողները, տեղկոմի նախագահն ու կոմջիջի բար-
տուղարը շարունակ գոռում եյին՝

— Բավական եւ:

Իսկ մնացած՝ մըսու շորերով լիքը դահլիճը պա-
հանջում եր շարունակել: Անկյունում նստած մեքե-
նագրուհի Մարոն աչքերը հառած, ժպիտը դեմքին
շարունակ ծափահարում եր: Դահլիճը լոեց. Մաքոն
շարունակեց:

— Վ՞եր որենքումն ա ասված, վոր աղմինիստրա-
ցիան, առանց տեղկոմի գիտության, 500 ոռոբլանոց
սպեց ընդունի և հետին հաշվով ցուցակում գրի ու
չաշխատած ամիսների սոճիկն ել թավազա անի... Եղ
վ՞եր որենքով աղմինիստրացիան հաշվի չի առնում
բանվորի խելոք առաջարկը, վոր մեր ստանոկի ար-
տադրությունը 50 տոկոսով բարձրացնում ա... Եղ
բավական չի, հալա եստեղ, ձեր աչքի առաջ նրան
ծաղրում ել ա... Յես շատ բան ունեմ տաելու, բայց
հրես կողքից շարունակ նախագահը բգում ա, վոր
շուտ վերջացնեմ, համ ել չեմ ուզում ձեղ ձանձրաց-
նեմ... Բերած փաստերն ասում են, վոր մեր գործա-
րանը գտնվում ա անհավատարիմ ձեռքերում. մենք

բոլորս մի մարդու պես պետք ա պահանջենք, վոր
բԳՏ քննի և մեղավորներին պատժի:

Դահլիճի մեծամասնությունը յերկար ծափահա-
րում, իսկ առաջին շարքերում նստած գոքրամասնու-
թյունը նայում եր ապշած դիրեքտորի յերեսին: Վեր-
ջինս ել հեգնական հայացք ձեւելով Սաքոյի վրա, ինչ
վոր քչիչում եր ըդիջի քարտուղարի ականջին:

— ԲԳՏ դիմելու կարեք չկա, — խոսեց նախագահը,
վոր ըստ յերկույթին, հաղորդում եր քարտուղարի
խոսքերը, — մենք ինքններս կարող ենք բժշկել հիվանդ
կողմերը, յես միանում եմ ընկ. Լունի առաջարկին,
այս եւ մի յեռյակ ընտրել ուսումնասիրելու գործարա-
նի բացերը, վերանայելու արդինալիւնի թվերը և
գործնական առաջարկներ մշակելու: Յես քվեարկում
եմ: Ու և համաձայն: Մեծամասնությունը Ով և գեմ:
վահ վոք: Ուրեմն անցնում եւ:

— Ընկեր նախագահ, — աեղից խոսեց Մաքոն,
ախր չե վոր ժողովականների մեծամասնությունը գը-
նում ե, նա չի մասնակցում քվեարկության, ինչպես
գուք մեծամասնություն ստացաք...

— Այդ միհնույն ե, ընկերներ, միք ցրվի, յեր-
բյակ պետք ե ընտրենք, սպասեցեք:

Նախագահի այս նախազգուցացումը չկարողացավ
կանգնեցնել բանվորներին, մեծ մասն արդեն հեռա-
ցել եր, յերբ ընտրվեց յեռյակը:

* *

— Այդ որից շատ չեր անցել յերբ սկսար Մաքոն
իր մի քանի ընկերների հետ միասին, կանգնած եր
աշխատանքի բորսայի փոքրիկ պատուհանի առաջ:

դու նման վոտքի կանգնեց, այս ու այն կողմից լըս-
վեցին ձայներ՝

— Թողեք խոսի, թողեք խոսի...

— Շատ յերկար խոսեց, այստեղ գիշերելու հո-
չենք — նկատեց նախագահը:

— Յերկար, բայց տեղին խոսեց, թողեք վեր-
ջացնի: Յեկ գահին իրարանցում առաջ յեկավ: Ա-
ռաջին շարքերում նստած գրասենյակի մի քանի ծա-
ռայողները, տեղկոմի նախագահն ու կոմջիջի քար-
տուղարը շարունակ գոռում եին:

— Բավական եւ:

Իսկ մնացած՝ մրոտ շորերով լիքը գահինը պա-
հանջում եր շարունակել: Անկյունում նստած մեքե-
նագրուհի Մարոն աչքերը հառած, ժպիտը դեմքին
շարունակ ծափահարում եր: Դահլիճը լոեց. Մաքոն
շարունակեց.

— Վոր որենքումն ա ասված, վոր ադմինիստրա-
ցիան, առանց տեղկոմի գիտության, 500 ոռւբլանոց
սպեց ընդունի և հետին հաշվով ցուցակում զրի ու
չաշխատած ամիսների ոռոճիկն ել թափազա անի... Եղ
վոր որենքով ադմինիստրացիան հաշվի չի առնում
բանվորի խելոք առաջարկը, վոր մեր ստանոկի ար-
տադրությունը 50 տոկոսով բարձրացնում ա... Եղ
բավական չի, հալա եստեղ, ձեր աչքի առաջ նրան
ծաղրում ել ա... Յես շատ բան ունեմ ասելու, բայց
հրես կողքից շարունակ նախագահը բցում ա, վոր
շուտ վերջացնեմ, համ ել չեմ ուզում ձեղ ձանձրաց-
նեմ... Բերածս փաստերն ասում են, վոր մեր գործա-
րանը գտնվում ա անհավատարիմ ձեռքերում. մենք

բոլորս մի մարդու պես պետք ա պահանջենք, վոր
թիջ քննի և մեղավորներին պատժի:

Դահլիճի մեծամասնությունը յերկար ծափահա-
րում, իսկ առաջին շարքերում նստած վորքրամասնու-
թյունը նայում եր ապշած դիրքառը յերեսին: Վեր-
ջին ել հեղնական հայացք ձգելով Սաքոյի վրա, ինչ
վոր քչիչում եր թիջի քարտուղարի ականջին:

— Բիջ գիմելու կարիք չկա, — խօսեց նախագահը,
վոր ըստ յերկութին, հաղորդում եր քարտուղարի
խօսքերը, — մենք ինքներս կարող ենք բժշկել հիվանդ
կողմերը, յս միանում եմ ընկ. Լեռնի առաջարկին,
այն եւ մի յեռյակ ընտրել ուսումնասիրելու գործարա-
նի բացերը, վերանայելու արդիինպլանի թվերը և
գործնական առաջարկներ մշակելու: Յես քվեարկում
եմ: Ով ե համաձայն: Մեծամասնությունը: Ով ե գեմ:
Վաչ վոք: Ուրեմն անցնում ե:

— Ընկեր նախագահ, — տեղից խոսեց Մարոն, —
ախր չե՞ վոր ժողովականների մեծամասնությունը գը-
նում ե, նաև չի մասնակցում քվեարկության, ինչպես
դուք մեծամասնություն ստացաք...

— Այդ միենույն ե, ընկերներ, միք ցրվի, յեր-
բյակ պետք ե ընտրենք, սպասեցեք:
Նախագահի այս նախազգուշացնումը չկարողացավ
կանգնեցնել բանվորներին. մեծ մասն արդեն հեռա-
ցել եր, յերբ ընտրվեց յեռյակը:

**

Այդ որից շատ չեր անցել, յերբ սկսար Սաքոն
իր մի քանի ընկերների հետ միասին, կանգնած եր
աշխատանքի բորսայի փոքրիկ պատուհանի առաջ:

Գրանցող նիհար, բայց աշխույժ դեմքով կինը մի փոքրիկ կտրոն մեկնելով նրան՝ ասաց.

— Հետեւեցեք լրագրներին, մենք ձեզ շուտով կկանչենք գործի ուղարկելու համար, վորովհետև շատ հաճախ ենք ստանում սիստրի պահանջագրեր։

— Շնորհակալ եմ, — ասաց Սաքոն ու իր ընկերների հետ դիմեց դեպի մոտավոր այդին։

— Սաքո, դու ի՞նչ ես անելու, — հարցրեց նրա հետ միասին գործարանից կրծառված մեխանիկ Արտաշը։

— Ինչ պետք առ անեմ, ի՞նչ յերեխու հարց ես տալի, կսպասեմ մինչև գործ կդառնեմ, կաշխատեմ։

— Սաքո, յետ լավ բան եմ մտածել... մեկ ուղցի առավոտը հաշիվը ստանալու ժամանակ փորձեմ, մեկ ել մտածեցի՝ չե, հալա լիկվիդացիոննին վերցնեմ, մի քանի որից հետո կանեմ, — ասաց Արտաշն ու նստեց Սաքոյի կողքին, յերկար աթոռի վրա։

— Որինակ, ի՞նչ նոր բան առ մտածածի, — հարցրեց Սաքոն։

— Դնանք դիրեկտորին խնդրենք, վոր մեզ նորից գործի ընդունի... Յես կասեմ, վոր ամեն բան իմ մեջ կալահեմ, լսածս ու գիտեցածս մի մարդու ելա չեմ ասիլ... Դու եւ հո գիտես, չափից դուրս վիրավորել ես նրան, առա, վոր խոսքերս յետ եմ վերցնում, սիստր եմ, լրագրում գրածներս ել գատարկ բաներ են... մի թեթև ոպրովերժենիա տուր, ամեն բան կը վերջանա... նա յել մարդ ե, կհասկանա, կմտնի մեր դրության մեջ...»

Մինչ Արտաշը աչքերը գետին գցած, յերկու ձեռքերի բթամատները խաղացնելով այս «խրաներն»

եր տալիս Սաքոյին, Սաքոն աչքերը շեշտակի Արտաշի յերեսին հառած, հեղնական ժպիտով տարուբերեց մի քանի անգամ գլուխն ու թեթև հաղի նման մի ձայն արձակեց։ Արտաշը գլուխը բարձրացրեց, նայեց Սաքոյին, կարմրեց, զգաց, վոր Սաքոյից անհաճո պատասխան պետք ե ստանա, շտապեց ուղղել։

— Յես հո չեմ ասում նրա առաջ գլուխներս կռացնենք, չե, այլ հենց ենպես, ընկերաբար, ախր չե վոր նա մի քանի անգամ մեզ իր տանը հրավիրել ա, աղ ու հայ ենք կերել նրա հետ... հա, կարծեմ դու մեզ հետ չես յեղել ներողություն... Յես եյի, են նոր ինժիները, բջիջի քարտուղար կեռնը, տեղկոմի նախագահը, ավագ վարպետները, մի քանի ել մեխանիկներ...»

— Արտաշ, եղ բանը քեզանից չեյի սպասում... Դու ինձ ում տեղ ես դնում... Դու ինչ ուղում ես արա, եղ քո գործն ա, համա ել ինձ եղպես բաներ չասես...

Արտաշը տեսնելով Սաքոյի համառությունը, խոսակցության տոնը փոխեց ու ծիծակելով վրա բերեց։

— Այ տղա, դու ել հավատացիք. յես քեզ խոսացնում եմ, դու լուրջ ես ընդունում: Սաքո, արի ես չարացած սրաներիս վրա մի կվարտ գինու դոնաղ անհեմ, ջնանդամը լիկվիդացիոննին ստացել ենք, անգործ մնալու դարդն ելա մի քիչ մոռանանք։

— Վոնց վոր տեսնում եմ, դու եսոր ձախ վոտիկ վրա յես վեր կացել, միտքդ ի՞նչ վոր ծուռն այցերում, յես շուտով տուն գնամ, թե չե դու ինձ քածերի մոտ գնալու առաջարկ ել կանես, — ասաց Սաքոն ու վեր կացավ տեղից։

— Ի՞նչ խրտնեցիր, այ մարդ, ջահել աչառի նը-
ման, դե վոր մի քիչ կատարներս տաքանա՝ եղ ել
կլի... Դե լավ, լավ, զարեջուր խմենք, յեթե զինի չես
ուզում...

Սաքոն այլևս չուզեց լսել Արտաշին. «Անաս բա-
րով» ասաց ու քայլերն ուզեց դեպի փողոց տանող
այգու դրուբը. Արտաշն ուզեց կանգնեցնել նրան, մի
քանի խոսք ասել, բայց Սաքոն թուավ տրամվայի
վագոնն ու անհետացավ:

* *

Մի քանի որից հետո թերթերից մեկում մի փոք-
րիկ թղթակցություն լույս տեսավ ծաղրանկարով. սե-
ղանի գլխին նստած եր մեխանիկական գործարանի
դիրեկտորը շրջապատված ինժեներներով, բջիջի քար-
տուղարն ու տեղկոմի նախագահը մի քանի սպեցնե-
րի հետ հարբած: Սեղանի վրա լիքը դինու շներ:
իսկ կողքին, գործարանում, բանվորներն անգործ,
մուրճերը ձեռքներին սպառնական հայացքներով
փնտում են աղմինիսարացիային...

Այս ծաղրանկարն իրարանցում առաջ բերեց
գործարանում, բանվորները ծիծաղում և միմյանց ե-
յին նմանեցնում: Այդ միջոցին դիրեկտորը՝ բջիջի
քարտուղարն ու տեղկոմի նախագահը թերթն առաջ-
ները դրած, խելք-խելքի եյին տալիս, թե ինչպես հեր-
քեն այդ թղթակցությունը, վոր ազատվեն խայտա-
ռակությունից:

Հերքումը գրեց բջիջի քարտուղարը, բայց ավել-
ի ծանր պարտականությունը գրին տեղկոմի նախա-
գահի վրա, նա պետք է ստորագրել տար բանվորնե-

րից միքանիսին, վորոնք ներկայ են յեղել քեֆին:
Դիրեկտորն այդ գործում «չեղող» եր. նա միայն իր
ներքին հուզմունքը ծածկելով եր զբաղված, նրա
զիսին խելք չեր մնացել, այդ որը վոչ վոքի հետ խո-
սել չեր ուզում, աշխատում եր թագնվել բոլորից,
փախչել հեռանալ...

Տեղկոմի նախագահը գործի յեր անցել. նա մեկ-
մեկ կանչեց քեֆին մասնակցողներին իր մոտ, ստո-
րագրել տվեց հերքումը և նախազգուշացրեց, վոր
բանվորների մեջ ել հերքեն, ասեն, վոր այդպիսի բան
չի պատահել...

— Սա կատարյալ խայտառակություն ե, մարդ
ել իր տանը, իր մոտիկ ընկերների հետ աղ ու հաց
ուտել չկարողանամ, — ասում եյին ստորագրողներն և
գլուխները շարժելով դժոհություն արտահայտում:

Հենց այդ որն ել Արտաշն իր ձեռքով պահան-
ջագիրը, ներկայացրել եր ըսրային ու մեկնել մեխա-
նիկական գործարանն աշխատելու: Հերքման տակ
վերջին ստորագրությունը նրանն եր:

* *

Սղոցագործարանի մեքենաների նորոգման ժամ-
կետն անցել եր. այդ պատճառով նա չեր կարողա-
նում իր առաջադրությունները կատարել: Բանվոր-
ներն ու տնտեսական-հասարակական կազմակերպու-
թյունները վորոշեցին գործը հանձնել ԲԳՏ-ին:

Այս բանը իմացել եր Խանքաջանը: Ծպտունյա-
նին կարուկ կերպով առաջարկեց ամենակարծ ժամա-
նակում վերջացնել մեքենաների նորոգումը:

— Ինքներդ դատեցեք, Մելիք Բողոքանին, յեթե

Թիֆլիսում շարժիչ մաքույկներ չկան, յես հո չեմ կակարող փայտից շինել. լավ ե, վոր ինքներդ եք զրել Մոսկայի գործարանին, վոր ուղարկեն, այստեղ յես մեղավոր չեմ, — արդարանում եր ինժ. Ծպտոնյանը:

— Միթե չեր կարելի այսքան ժամանակամիջում գոնե մի մարդու ուղարկել՝ բերել տալու...

— Ի հարկե, կարելի յեր, բայց ինչո՞ւ չարիք...

— Վորովհետեւ հույսս քեզ վրա յեր, — բարկացած ասաց Խանբեգյանն ու ընկալ բազկաթոռի վրա:

— Դուք մի հուզվեք, Մելիք Բողդանիչ, յես կարձ ժամանակում զլուխ կրերեմ այդ գործը, նրանք ել իդուր են աղմուկ բարձրացնում... առանց այդ մեքենաների յել նրանք իրենց արդֆինալանը միշտ թերակատարել են, միենույն ե, յեթե նույնիսկ մեքենաները պատրաստ լինելին, գարձյալ կթերակատարելին, — հանդստացնում եր Ծպտոնյանը:

— Կերջապես, արեք ամեն ինչ, միայն այս քանի որս պետք է հանձնեք, բավական ե... ձեր պատճառով... բայց ավելորդ ե այլևս այդ մասին խոսել... լսո՞ւմ եք, յես ել չեմ ուզում յերկարացնել...

* *

Մի առավոտ ցրիչը Խանբեգյանին հանձնեց կուսակցական կոմիտեյից ստացված ծրարը, վորով պահանջվում եր յերկու որվա ընթացքում ներկայացնել վերջին կվարտալի արդֆինալանի հանրագումալը:

Մելիք Բողդանիչի կարինատի գուտը ներսից փակ եր, ինքն ու դլխավոր հաշվապահը կարեոր խորհրդակցություն ունելին:

— Վոչ մի գեղըռում և վոչ մի տեղ պրոստոյը պրված չպետք ե լինի, — պնդում եր Մելիքը:

— Հապա ինչով արդարացնենք թերակատարումը, — վախկոտ հայացքով հարցրեց հաշվապահը:

— Ի՞նչ թերակատարում, գժվել ես ի՞նչ ե... վոչ թե թերակատարում, այլ գերակատարում ունենք մենք...

— Ի՞նչպես, ահա թվերը:

— Թվերը... այդ թվերը հո յերկնքից չեն իջեն ինքդ ես զրել ինքդ ել ուղղիր: Նույն քան կոնտրալային թվերի կազմելը, նախընթաց ամսում վժրքան մահճակալ ունելինք պատրաստ:

— Հինգ հարյուր:

— Այդ հինգ հարյուրը յի՞րը հանձնեցինք գլխավոր հիվանդանոցին:

— Հոկտեմբերի վերջին:

— Գրքում ինչպես ես անցկացրել:

— Իրեկ սեպտեմբերի արտադրություն:

— Իսկ յեթե առաջին յերեք տառերի տեղ նույնիս և գումարն ել փոխազերս մի ամիս հետո — զըժվար կլինի քեզ համար...

— Ե՞ս, վոչ մի գժվարություն, իհարկե, բայց այդ...

— Դվ, լավ, լավ... այս զիշեր անպատճառ թվերը պետք ե ուղղես... մեքենագրուհուն ել կպահես մոտդ, ամեն ինչ կարգի կրերես... Մի բան, վոր տեղ կոմի ու թիջը առանձին հաշվառք չեն տանում... սոցմրցակցություն ել հո գիտես, միայն ձեականություն ե... Ով ե նրանց համար առանձին հաշվապաթյուն կտամակերպելու... Հա մոռացա ասել յես հություն կտամակերպելու...

արդեն քո ոռձիկի մասին մտածել եմ, մի վորեն
պատրվակի տակ 50 ոռւբի կավելացնեմ յեկող ամսի
մեկից, կրաքնեմ 300 ոռւբի...

— Եատ շնորհակալ եմ, յես ել կաշխատեմ ավե-
լի անձնվիրությամբ ծառայել կարգարացնեմ ինձ
վրա զրված հույսերը:

Յեվ յերկուսով ել քաղցր տպավորության տակ
բաժանվեցին իրարից:

Յերկրորդ որը Խանքեզյանի սեղանի վրա զըր-
ված եյին արդֆինպլանի ցուցանիշները: Նա նստած
յերկար նայում եր մի քանի յերեսից բաղկացած արդ-
ֆինպլանին, ինքն իրեն ասում:

«Հը, թող գան հիմա հետո խոսեն... Առաջադրված
եր 1,800 ճիշտ ե, փաստորեն պատրաստված ե 1,850...
ճիշտ ե... գերակատարում... պրոդուկտ 5 որ... պրոսառյ
չի յեղել... ճիշտ ե... ինքնարժեքն իջել ե 6 տոկոսով...
ճիշտ ե... ընդհանուր շրջանառությունը բարձրացել ե
20 տոկոսով... ճիշտ ե... Անցլալ տարվա դերիտորներն
այս կվարտալում վճարել են..., այդ միևնուն ե գոր-
ծարանը մուտք ե ունեցել...

Խանքեզյանի աչքերը ուրախությունից փայլում
եյին. նա կանչեց հաշվապահին, պատվիրեց արդֆին-
պլանից մի-մի որինակ ուղարկել տեղական թերթե-
րին, մեկը՝ կուսույկոմին, մեկը՝ ԲԳԾ, մեկը՝ բարձրա-
գույն տնտեսական խորհրդին, մեկը՝ տրեստ և մեկն
ել հանձնել կոմբջիջի քարտուղարին:

— Իսկ արտադրական խորհրդակցության համար,
— հարցըց հաշվապահը:

— Դու գեռ ելի քնած ես յերեւմ... նրանց չը-
տաս. յեթե պահանջեն՝ ասա ավելորդ որինակ չունեմ,

մինչև թերթերում տպվելը վոչ վոքին, բացի իմ ասած
հիմնարկներից, չես տա:

Յերկու որից հետո թերթերում խոշոր տառերով
զրված եր մեխանիկական գործարանի արդֆինպլանի
գերակատարման մասին, իսկ նրա կողքին սև շրջա-
նակում տպված եր սղոցագործարանի թերակատա-
րումը, վորի առթիվ թերթերն առաջարկում եյին. սև
տախտակին գրել սղոցագործարանի ղեկավարների ա-
նունները:

* *

Մի առավոտ, յերբ ամեն մեկն իր աշխատան-
քով եր զբաղված, յերբ մեխանիկական գործարանի
բանվորներն անգործությունից հոգնած՝ դիրեկտորի
կարինեաի առաջ սպառնական բունցքներ եյին ճո-
ճում, պահանջում եյին կոմբջիջի քարտուղարից ու
տեղիումի նախագահից նորից ընդհանուր ժողով հրա-
վիրել հարցը բանվորների քննության դնել... Յերբ
սղոցագործարանի բանվորներն ել իրենց վիրապորված
զգալով՝ պահանջում եյին իրենց տեղիումից ու կոմ-
բջիջից արդֆինպլանի թերակատարման կոնկրետ
պատճառները բարձր մարմնների շուտափությունու-
թյան առարկա դարձնել — մեղավորներին պատասխա-
նատվության յենթարկել... Այդ ժամանակ ԲԳԾ քար-
տուղարի սեղանի առաջ կանգնած սլեսար Սաքոն լրա-
ցուցիչ ցուցմունքներ եր տալիս կազմվել եր մի ա-
հագին «գործ», վորի մեջ կային թերթերից կտրած
բազմաթիվ թղթակցություններ, գրավոր ցուցմունք-
ներ, Խանքեզյանի ու Շապունյանի կազմակերպած
քեփերի նկարագրությունները, կեղծած հաշվապահա-

կան գրքերի թերթեր, բանվորների ստորագրությամբ
դիմումներ, յիտին թվով գրած «հրամաններ»...

* *

— Տն, Արտաշ, իմացմբ—հարցրեց տոկար Առա-
քելն իր դադզյահի մոտ կանգնած մէխանիկ Արտա-
շին:

— Ի՞նչ:
— Ռեվիզիա...
— Ի՞նչ ռեվիզիա...
— Ռեվիզիան ինչ տեսակ ա լինում, ռեվիզիա
ելի... կանոնը տակն ու վրա յեն անում...
— Ովքեր:
— Ովքեհը... ըհը... նրանք ելի մեր ԲԳՏ բրի-
գագը:

Արտաշի գույնը մի քիչ թռավ, մտատանջության
մեջ ընկավ. «Ի՞նը, չի թե ինձ ել խառնեն... յերանի
վոտք կոտրեր, չգնայի քեֆի... չե, ճիշտ եր ասում
Սաքոն, վոչինչ չի թաղնիկ... բայց յես ի՞նչ գործ ու-
նեմ. ի՞նչի եմ անհանգստանում, յերբ ինձանից մեծե-
րը ենտեղ եյին... քարտուղարը, նախագահը, ինժենե-
րը, ցեսերի վարպետները»... Յեվ յերբ գլուխը բար-
ձրացրեց՝ իր առաջ յերկու անձանոթ յերիտասարդի
հանդիպեց, վորոնցից մեկն ավելի մոտենալով՝ մտեր-
մաբար հարցրեց.

— Ընկեր, ի՞նչպես ե տարվում ձեր ցեխում սոց-
մրցումը:

— Ներողություն, դուք ով եք հարցրեց Ար-
տաշը:

— Բրիգադի տղերանցից ա, բա դլիսի չես ընկ-

նում, — վրա բերեց տոկար Առաքելը, — ամեն բան
ճիշտն ասա, մի վախճանա:

— Սոցմրցումը... այս, այն, մի ժամանակ կար-
ծեմ ինչ վոր ժողով յեղավ, եղ մասին խոսում եյին...
հիմա ել շատերը մրցում են...

— Անցնենք մյուս ցեխերը, — կտրեց բրիգադի
անդամներից մեկը:

— Դուք հարվածային բրիգադ չունեք, ովքեր
են բրիգադում մտնում... հարցրին սկ բանվորին:

— Մենք բոլորս ել հարվածային ենք, յեթե ադ-
մինխստրացիան ել հարվածային լինի, — պատասխա-
նեց սկ բանվորը քմծիծաղով:

— Ի՞նչպես թե...
— Հենց ենպես, ցեխերի մի մասը ամսվա կեսը
անգործ կանգնած ա, պրոստոյ ունի, յեթե ազմինիս-
տրացիան ել հարվածային լինի՝ կմողնան, վոր անգործ
մնանք... իսկ դուք վոր հարվածայնության մասին եք
հարցնում...

— Ընկեր, ձեր ցեխը քանի տոկոսով գերակա-
տարեց արդինալյանը, — հարցրին դարձնին, վոր յեր-
կաթ չինելու պատճառով նստել եք սալին ու ծխա-
խոտ եք փաթաթում:

— Տոկոսն ել, մոկոսն ել՝ զիրեկտորն ու հաշվա-
պահը գիտեն... Յես եղ բանից բեխաբար եմ...

— Իսկ ձեր գործարկումն այդ մասին վոչինչ չի
ասել:

— Մի ժողովում ինչ վոր թվեր կարդացին, դը-
րանով ել վերջացավ:

— Ներողություն, ընկեր, արդինալյանը ցեխե-
րին հասցրել են, դուք զիտեք այդ մասին, — հար-

ցրին մի միջահասակ ատաղձագործի, վոր մողելնի ցե-
խի վարպետն եր:

— Մեր ցեխն ինչի՞ պիտի առանձին պլան ու-
նենա... ով ե ջոկում մողելի ցեխը գործարանից... պը-
լանը գործարանն ունի, գնացեք կանտորում տեսեք...

Բրիգադները մինչև կես որ զբաղված եյին
հարց ու փորձով: Այսուհետև նրանց ղեկավարները
մի մեծ թղթի վրա արտագրեցին բոլորի ցուցմունքնե-
րը, և ընկերների կարծիքն ել անփոփեցին ու տվեցին
գեռ քննությունը շարունակող ԲԴՏ ներկայացրեցի-
ներին:

* *

Մի շաբաթից հետո թերթերում լույս տեսան
ընդարձակ հոդվածներ—«Քնասարարություն մեխանի-
կական գործարանում... դիրեկտորը, ինժեները, սպեց-
իալը ձերբակարված են... Հանված են գործից կոմքի-
մի քարտողարը, տեղիումի նախագահը»...

— Բա զար յես ասում եյի, թե Սաքոն ճիշտ եր
խոսում, գրա համար կրատեցին, չեյիք հավատում...
բա ինչի՞ մի քիչ հետո Արտաշին ընդունեցին, Սաքո-
յին չե, — ասում եր տոկար Առաքելն ընդմիջումի ժա-
մանակ ճաշարանի սեղանի շուրջը նստած իր ցեխի
բանվորներին:

— Դե մենք ինչ գիտեյինք, գործարկումը դիրեկտո-
րին եր արդարացնում, բջիջի քարտողարն ել ասում
եր իր լրագրներում սուտ են գրում, վհրին հավա-
տայինք...

— Զե, ափփերիմ Սաքոն, մարդը մինչև վերջը
գլուխ դուրս տարավ... Տեսնես գործի ա, թե ելի ան-

գործ ա... Ասենք Վարդանին, թող բերի նըան: Դե,
տղերք ջան, յիրկու բողի յա պակաս, մինչև ցեխը
հասնելը գուղով կտան, — ասաց Առաքելն ու առա-
ջնն ինքը վեր կացավ սեղանից: Նրան հետեւցին
մյոււները:

Վարդանը 20 տարվա վականագործի սասած
ունիցող բանվոր եր: Մի ամիս առաջ նշանակվել եր
Խանքեցյանի տեղը: Նա որ ու գիշեր գործարանից չեր
հեռանում, ինքն անձամբ մանում եր ցեխինը, նա-
յում աշխատանքին, նկատած դեֆեկտը յերկրորդ որն
և եթ շակում եր: Նրա հետ միասին կոմքիչի քար-
տողար եր ընտրվել չոփուռ նիկոլը, գործարկումի
նախագահ՝ յերիտասարդ Գրիշան: Ցերելն եւ միշտ մի-
ասին եյին խորհրդակցում: Գործից հետո մինչև կես
գիշեր գրասենյակում նստած շարունակ գործարանի
գրությունը բարեկավելու, յերկաթ ճարելու, պատվեր-
ներ ընդունելու, ցեխինը նորոգումներ կատարելու,
մեքենաները կարգի ցցելու մասին եյին խորհում, ար-
տադրական խորհրդակցության նախագահ՝ Վարդանի
ողնական ինժեներ Ծատուրյանի առաջարկություննե-
րը ծանր ու բարակ քննում, քննադատում եյին, ապա
արտադրական խորհրդակցության քննության զնում:
Մի ամսվա մեջ հինգ նիստ ունիցավ խորհրդակցու-
թյունը, ընդունված յերեսուն առաջարկություններից
քսանինդն արդեն իրականացված եր. ինժեներ Ծա-
տուրյանի աջակցությամբ բանվոր Դալայանի առա-
ջարկած խառարի գաղղրակի կտրող մասին մի լեզվակ
եր ավելացվել, վորի շնորհիվ գաղղրակն որական մահ-
ակալի հարյուր ոյուներ խառարի տեղ խառում
եր 150:

Գործարանը փոխել եր իր տեսքը:

Բոցավառ քուրաններից դուրս եյին գալիս կասկարմիր յերկաթները, սալին վիզները ճկած՝ տապակ վում եյին շոնդյունով զարկվող շոգեմուրծերի հարվածների տակ:

Դազգյահների ծվծվացող սուր տատմների տակից կուրս թուշող մետաղյա տաշեղները խնամքով հավաքվում, արկղ եյին թափվում, դա ել մի բարիք եր, վորից հաղարավոր փութ նոր մետաղ պիտի ստացվեր: Դազգյահների առաջ կանգնած բանվորները տարբեր ձևերի մետաղյա մասերը հղկելուց հետո տալիս եյին հարեան դազգյահնին:

Հաստ ու յերկար շղթաներով բակի սյուներից կախված հակայտկան կաթսաններին փարվել են մեղուները վորոնց մուրճերի հարվածներից դուռում - գոչում եր կաթսան ու խլացնում շրջապատը:

Յերկար, շատ յերկար տարածության մի ծայրից մեկն սկսում եր յերկաթի կլոր մասերը միացնել կողքի հարեանը նրանից առնելով՝ միջի մանր սյուներն ամրացնել նրա մոտիկնը՝ ծայրերի ու կողերի բարակ ձողերը կպցնել, ապա հետեյալը՝ ցանցը հագնել... Յեվ տարածության մյուս ծայրին՝ մահճակալը կանգնած սպասում ե ներկվելուն, գեղեցկանալուն:

Այստեղ արդեն գործի յեն անցնում կանայք. մեկը՝ խնամքով մաքրում ե, մյուսը կապույտ դույնի ներկն ե քում մահճակալի հաստ մասերին, յերրորդը դեղին վասկեպույն ներկով զուգում ե բարակ ձողերը, չորրորդը ցանցն ե կարգի բերում...

Իսկ կոմյերիաների ակտիվի բրիգադները արշավի յելած՝ ջարդ մետաղ և յերկաթ եր հավաքում ույսոններում, ստուգում եր պահեստներն ու հիմնարկները, յերկաթի սնունդ հայթայթում գործարանին:

Վոչ մի անգործ, վոչ մի տրաունջ վաշ մի խոսք, համրերի աշխարհ ե... Սոցմբցակության յելած մարտիկները լուս ու մունջ պայքարում են արդֆինալանի համար, ամեն մեկն իր ցեխի, իր բրիգադի հաղթանակն ե յերազում...

Մի ամսվա ծրագիրը գործարանը տասը տոկոսով գերակատարել եր:

— Բանվորների թիվը հաբյուր հոգով պիտք ե ավելացնենք, — ասել եր նոր գիրեկոտը Վարդանը:

Յեվ մի քանի որ չանցած՝ քսան փականազործանվորի պահանջագիր եր ուղարկել Աշխատանքի Բորսային, Դրանց թվումն եր և Սաքոն:

* *

Սուլիչը գեռ չեր սուլեց գործարանի դռանը հավաքված բանվորները շրջապատել եյին Սաքոնին ու շնորհավորում նրա վերապարձը:

— Թողեք հին պատմությունը, նոր բան, ասեք, ինչպես են այժմ գործերը — կտրեց Սաքոն բանվորներից մեկի խոսքը, վոր նոր եր սկսել հին գիրեկոտը մասին խոսել:

— Հիմա, Սաքոն ջան, զրուստ վոր քո սրտի ուղածի նման ա... Թե տղա յես բանի, հասցրու գործը:

— Տն, ասում եյին յերկաթ չկա, մասեր չկան, չուզուն չկա... բա ես վերտեղից լցրեց գործարանի թազա գիրեկոտը Վարդանը:

— Մանավանդ մեր նոր ինժեները՝ թամամ տղամարդ ա, սաղ որը ցեխերից չի հեռանում... մի վոտը մեզ մոտ ա, մեկելը կանորում... մեկ ել տեսար՝ դադզյանը քանդել ա, աշակերտներին զլիսին հավաքել ամեն մի վիճան ու բոլոր տալիս ա նրանց ու հավաքել տալիս դադզյանը:

— Յերեկ տոկարնի ցեխում բարձրացել եր ճախրակի վրա, ենաևդից ցույց եր տալիս, թե սեմենը վոնց պատի հագցնենք, վոր պատովող կալոսը չվասի մեզ...

— Սաքո ջան, յես ավելի լավն ասեմ, ևսոր վոր գործ սկսես՝ յերեք որից հետո քո դիմի վերև պատի վրա կախ կանեն քո պրոմֆինովանը... Այ, մենք ամենքս ել ունենք, ցեխերն իրենցն ունեն, բրիգադներն՝ իրենցը, ով բրիգադում չի առանձին ունի...

— Մի տես, ինչ տղեր ենք ջոկեի չոփուռ նիկոր քջիջի քարտուղար ա, երակի կտոր ա, դիրեկտոր վարդանի մասին հո-խոսք. չկա, շատ խելոքը գուրա կանգնեց, են ջահել Գրիշկին ել պականը չգիտենաս, գործարկոմի նախագահ ա, դալիս ա ցեխերն, ընենց լեզու ա բանեցնում, ընենց բացատրում ա, վոր ուզենցովս սարեինովանի գոզովոր ես կատում... ինքն ա ամեն որ ուչոտ անում, գոզովորները գրում...

Ընկերների չորս կողմից տեղացող այս նորությունները շշմեցրել եյին Սաքոյն: Նա ուրախության ժամկանը գեմքին, աշքերը լայն բացած, ուզում եր գոհունակության խոսք տսել, բայց հաջորդող ավելի հետաքրքիր տեղեկությունները լսեցնում եյին նրան և նա միայն զլիսի շարժումներով եր պատասխանում:

Սուլիչը սուլեց:

Խոսակցությունն ընդհատվեց: Բանվորները մեղուների նման ցեխերում իրար անցան: Ամեն մեկը լավ գիտեր իր անելիքը: Սաքոն ել գնաց իր հին տեղը: Բայց շատ բանով եր փոխվել, ել առաջվա նման չեր:

Սև ու կարմիր տախտակ: Յերկուսն արդեն սև տախտակի վրա իրենց տեղերը բռնել եյին:

— Ես ապուշներն ելի չեն գրսովի՞ւ—ասաց ինքն իրեն Սաքոն ու աչքերը մյուս պատերին գցեց.

— Կորչի պրոստոյլ:

— Կորչի պրոգուլ:

— Դներս սիմուլյանտներին:

— Վաչ մի բրակ:

— Վաչ մի զրամմ մետաղ չպետք ե կորչի:

— Ընկեր, լով նայիր դադզյահիդ, նա քո հարադատն ե:

— Վաչ մի ցեխ, վոչ մի դադզյահ առանց ծրագրի:

— Վաչ մի բանվոր սոցմբցակցությունից գուրու:

— Արդֆինովանի համար բոլորս պատասխանառու յենք:

— Ցույց տներ, ինչն ե քեզ խանգարում և պահանջիր անհապաղ ուղղել այն:

— Մասնակցիր արտադրական խորհրդակցության նախարին, քո կննկրետ առաջարկներով ոգնիր արտադրությանը:

Լողանգներ, պլակատներ, վորոնք Սաքոյի հետ խոսում եյին իր «իուլ ու համը» բանվոր-ընկերների փոխարին...

Սաքոն մի բոպե կանգնած մնաց տեղում, նա
զգացվեց, ուրախության արցունքներ յերևացին նրա
փայլող աչքերում:

Մուրճը վերցրեց շարունակեց պայքարը՝ յերկու
ամիս վորբացած իր գաղղահի հետ միասին:

Մի քանի որից հետո Սաքոն հարվածային բրի-
գադի անդամ եր:

ՄԱՄՈՒԼԸ — ԲԱՆՎՈՐ ԳԵՎՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առանձնապես պետք է ընդգծել Բանվոր
Գեվոյի «Նախորյակին»-ը, վոր գունեղ կերպով
տալիս և պատերազմի արհավիրքների նկարագիր:
Հեղինակին աջողվում է տալ իր նկարագրած
ժամանակի և վայրի որեկտիկ պատկերը:

Դգնունի — «Գրական Դիրքերում», № 2, 1928 թ.

Բանվոր Գեվոյի «Անպետք մարդը» պատ-
մվածքում ցուցադրված է մեռնող գասակարգի՝
առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչ
Միխայիլ Յակովլիչի ապօռմները 1905 թ. հե-
ղափոխության միջոցին և հետո:

Բանվոր Գեվոն այս պատմվածքի մեջ ցույց
է տալիս դիտելու և դիտածը դեղարվեստա-
կան պատկերներով ու հոգեբանական մոմենտ-
ներով արտահայտելու կարողություն, և դա վաղ-
ջունելի յէ, մանավանդ իբրև բանվորի ստեղծա-
գործություն:

Գ. Մելոյան — «Պրոլետար», № 264, 1930 թ.

Գեվոյի փորձերը՝ տալ նոր թեմատիկա
(«Պայքարում»), գովելի յե, բայց գովելի չե նրա
թեթև վերաբերմունքը — գեպի նյութի մշակման
խնդիրները:

Աղ. Վարդանյան — «Գրական Արշակ», № 1, 1930 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

1. Նախորյակին	3
2. Լուսադեմին	74
3. Անդետք մար	87
4. Պալքարում	119



9, 1 fl. 50 q.

H A P M.
2-7302

723



60977.

2-730a